

Հիւնուր Ղուրանում

الله عَلِيٌّ مِنْ سَمَاءٍ وَمِنْ أَرْضٍ
وَمِنْ بَيْنِ السَّمَاوَاتِ الْمُتَّبِعَاتِ

Հեղինակ

Դոկտոր Արդուլ-Ղահմեն Էլ-Շիհա

Հ. Հայոց Արքան Բն Հայ Աշխաթ Աշխաթ

Թարգմանությունը

Աշխաթ Ի Եվրոպ Աշխաթ Աշխաթ

EUROPEAN ISLAMIC RESEARCH CENTER (EIRC)

& Արմեն Նալբանդյան

Հիւուսը Ղուրանում

Դոկտոր Աբդուլ-Ռահմեն Էլ-Շիհա

Թարգմանությունը

EUROPEAN ISLAMIC RESEARCH CENTER (E.I.R.C)
& Արմեն Նալբանդյան

Ստուգող հանձնաժողով:

Աննա Ռ. Հակոբ

Արու Առամ

© Գրքի բոլոր իրավունքները պատկանում են հեղինակին

Դոկտոր Աբդուլ-Ռահմեն Էլ-Շիհա

Հեղինակը թույլատրում է վերատպել կամ կրկին հրատարակել գիրքը, եթե որպես նպատակ ծառայում է զրքի անվճար տարածումը, որի ընթացքում արգելվում է կատարել փոփոխություններ:

Վերոնշյալ կանոնները պահպանելու և անհրաժեշտության դեպքում հեղինակը պատրաստ է տրամադրել զրքի բարձրորակ կրկնօրինակներ էլեկտրոնային վիճակով:

- Առաջարան*
- Առաջին արարածը*
- Երկնքի ու երկրի արարումը*
- Մարդու ստեղծման իմաստությունը*
- Առաքյալների անհրաժեշտությունը*
- Ալլահի մեծ մարզարեները*
- Ազգերի մարզարեներ և առաքյալներ ունենալու կարիքը*
- Մարզարեներ և առաքյալներ ընտրելու մեջ Ալլահի իմաստությունը*
- Մարդկության նախահայր Աղասի արարումը*
- Աղասի ու նրա կնոջ դրախտից աքսորումը*
 - 1. Մարզարեն Նոյը
 - 2. Մարզարեն Աբրահամը (Իբրահիմ)
 - 3. Մովսես (Մուսա) մարզարեն
 - 4. Մարզարեն Մուհամմեդը
- Ալլահի առաքյալ Հիտուսը*
- Իմրան ընտանիքը*
- Մարիամը, (թող Ալլահը օրինի նրան)*
- Մարզարեն Հիտուսը*
- Հիտուս մարզարեի մարզարեությունը*
- Մարզարեն Հիտուսի նկարագրությունը*
- Հիտուսի ֆիզիկական նկարագրությունը*
- Հիտուսն ու նեոր*
- Մարզարեն Հիտուսի հրաշքները*
- Մարզարեն Հիտուսն ու նրա Շիրկից (բազմաստվածությունից) հրաժարվելը*

- Մարզարե Հիտուսի ավետը Սուհամմեղի գալուստի մասին*
- Ռազմիկների ու հոգևորականների վերաբերմունքը մարզարե Սուհամմեղին*
- Հիտուսի հետևորդների նկարագրությունը*
- Հիտուսի Համբարձումը երկինք*
- Մարզարե Հիտուսի վերադարձը*
- Եզրակացություն*

بِسْمِ اللَّهِ الرَّحْمَنِ الرَّحِيمِ

Առաջարան

Ինչպիսի՞ն են մուսուլմանի համոզմունքները մարգարե Հիսուսի վերաբերյալ: Իսկապէ՞ս մուսուլմանները հարգում և սիրում են նրան: Այսօր ԶԼՄ-ները տարածում են Իսլամի բացասական կերպարանք, որի համաձայն Իսլամը թվում է ատելության և հասարակ մարդու անտանելության կրոն: Իրականում յուրաքանչյուր գործող մուսուլմանի հետ հանդիպողը հասկանում է, որ նրանք խաղաղաւեր և համբերատար մարդիկ են:

Իսլամի համոզմունքների համակարգը պարզորեն ցույց է տալիս, որ դա համբերատարության կրոն է: Մուսուլմանական հավատքում կարևոր է համարվում բոլոր առաքյալներին ու մարգարեներին հավատալը, որ ուղարկվել են Ալլահի կողմից՝ նրանցից յուրաքանչյուրը մանրամասնորեն նկարագրված է Ղուրանում ու մարգարեական հաղիսներում: Մինչ Հիսուսի կյանքի մանրութների մեջ խորանալը, ես համարում եմ, որ կարևոր է իմանալ, որ այդ թեման հաջորդելու է հակիրճ հիմունքի, հիմունքի մարդկության արարման և կարևոր դերի նպատակով, որը խաղում է մեր կյանքի հոգեկան կառավարումը:

Ընդհանուր առմամբ հոգևոր կառավարումը մեծ նշանակություն ունի կյանքի բոլոր ասպեկտներում մեր պահպանման համար: Ղուրանը հանդիսանում է աստվածային գրություն, որը Ալլահը հայտնել է մարգարե Մուհամմեդին՝ (Խ.Ա.Ո.Ն.) բոլոր մարգարեներից և առաքյալներից վերջինին: Այս ընդգրկուն հավատքը բոլոր ժամանակների մարդկանց համար է: Այդ կիրառված է մարդկության բոլոր խնդիրներում: Իսլամը ոչ թե կրոն է, այլ, ավելի շուտ, կյանքի ճանապարհ:

Իսլամի վյուս ներքին ունակությունը նրանում է, որ դա ողջախոհության կրոն է և շատ տրամաբանական է: Ուշադրություն դարձրեք իսլամական համոզմունքների հետևյալ օրինակներին: Ինչպես են մուսուլմանները հավատում Աստծում, Ով հանդիսանում է ամեն ինչի

Արարիչն ու չունի գործընկեր: Իսլամի առաքյալ Մուհամմեդը ասել է ստեղծման փուլերի մասին, ինչպես պատմել է Նրա հետևորդ Իմրան բին Հուսեյնը: Նա ասել է:

«Եմենից մարդիկ եկան ու ասացին. «Ով Ալլահի առաքյալ, մենք եկել ենք քո մոտ Եմենից, որ իմանանք Դինը, այդ պատճառով հայտնիր մեզ, թե ինչն է ստեղծվել առաջինը»: Նա ասաց. «Ալլահը միշտ կար, և ոչինչ չկար Նրա հետ: Նրա զահը գտնվում է ջրի վերևում և ամեն ինչը, որ պետք է լիներ զրված է Պահպանվող մազաղաթում, և այդ ժամանակ երկինքն ու երկիրը ստեղծված էին»:

Ալլահը միշտ տարբերվում էր Իր արարածներից, որ սկիզբ ունեն: Ալլահն ասում է.

«Նա Առաջինն ու Վերջինն է, Վերինն ու Մոտը: Նա ամեն ինչի մասին գիտի»: (57:3)

Ալլահն առաջինն էր: Նրանից առաջ ոչինչ չի եղել: Նա կենդանացրեց բոլոր արարածներին: Նա նման չի Իր արարածներից որևէ մեկին: Նրա և մեր միջև նմանություն չկա: Ալլահն ասում է.

«Նրա նման ոչինչ չկա, և Նա Լսող ու Տեսնող է»: (42:11)

Ալլահը մեզ պարզեցրել է, որ նրան նկարագրելն անհնար է, և ոչ ոք չի կարող իլել Նրա մեծությունը: Արդեն մեկը մեզ հրապուրում է Աստծով, և պահում է մեր հավատը նրա յուրօրինակությանը, և մեր պահանջարկը նրան երկրպագելու համար: Ալլահն, Ամենաբարձրյալն ասում է.

«Նա գիտի նրանց ապագան ու անցյալը, սակայն նրանք ունակ չեն իմանալ այդ ամենն իրենց գիտակցությամբ»: (20:110)

Ալլահից բացի ամեն ինչ ստեղծված էակ է: Ալլահն, Ամենաբարձրյալն ասում է.

«Այդպիսինն է Ալլահը: Չեր Աստվածն ու ամեն ինչի Արարիչը: Զկա աստվածություն բացի Նրանից: Ինչքան հեռու եք դուք Ճշմարտությունից»: (40:62)

Մուսուլմանական հիմնական հավատներից մեկն այն է, որ Ալլահն անում է ինչ կամենում է, և անում ինչպես մտքով կանցնի: Ալլահի օրենքներին ոչինչ չի կարող հակասել: Ալլահն Ամենահզորն ասում է.

«Քո Աստվածը ստեղծում է ինչ ցանկանում է, և ընտրում է, սակայն նրանք ընտրություն չունեն: Ալլահն ավելի բարձր է նրանցից՝ ում Նրան գործընկեր են տալիս»: (28:68)

Առաջին արարածը

Ղուրանը, որը հանդիսանում է Ալլահի խոսքը, մեզ բացատրում է, որ այս աշխարհը առաջացել է պարզ ոչինչից: Ալլահն, Ամենաբարձրյալն ասում է.

«Նա երկնքի և երկրի Արարիչն է: Եթի Նա որոշում է ընդունում, ապա բավական է, որ Նա ասի. «Եղի ր», որ դա կատարվի»: (2:117)

Ալլահի առաքյալը (Խ.Ա.Ո.Ն.) մեզ պարզեցնում է, որ առաջին բանը, որ ստեղծվել է՝ դա ջուրն է, որը գտնվում է բոլոր արարածներում: Ալլահը ստեղծել է դա Իր ուժով: Հարիսում ասվում է.

«Ամեն ինչ ստեղծված է ջրից»: (Իբն Զիբբան)

Երկնքի ու երկրի արարումը

Ալլահը Ղուրանում մեզ հայտնում է, որ Նա ստեղծել է երկինքն ու երկիրը վեց օրում: Ալլահի համար դա ոչ մի դժվարություն չէր պարունակում: Ալլահն, Ամենաբարձրյալն ասում է.

«Մենք արարեցինք երկինքը, երկիրն ու ամեն նրանց միջև գտնվողը վեց օրում, և Մեզ հոգնածությունը զգացնել չուվեց»: (50:38)

Ալլահը կարող էր հեշտությամբ ստեղծել այդ ամենը մի ակնթարթում: Ալլահն, Ամենաբարձրյալն ասում է.

«Ալլահին է պատկանում Երկրի ու երկնքի գաղտնիքը: Ժամի գալուստը նման է ակնթարթի կամ ավելի շուտ: Ճշմարիտ, Ալլահն ընդունակ է ամեն բանի »: (16:77)

Եթե Ալլահը կարող էր ստեղծել այդ ամենը մի ակնթարթում, ապա ինչու՞ չարեց դա: Իմաս Իբն Ալ-Զավզին պատասխանել է այդ հարցին, ասելով.

«1. Ալլահն ուզում էր ցուցադրել Իր արարածի անսահման իմաստությունը: Ամեն էակի արագ ստեղծումը ակնհայտ կաներ Նրա ուժը, այնժամ, երբ դանդաղ արարումը ցուցադրեց Նրա իմաստությունը:

2. Ալլահը ցանկանում էր ցույց տալ Իր ստրուկներին, թե ինչքան կարևոր է համբերատար լինելը»:

Մի այլ գիտնական՝ Ալ-Կուրտուբին հիշատակել է մեկ այլ պատճառ այդ մասին: Նա ասել է. «Ալլահը ստեղծել է երկինքն ու երկիրը վեց օրում, որ ցույց տա, որ ամեն ինչ կյանքում ունի իր ժամանակը»:

Ալլահն Ամենաբարձրյալն , ասում է.

«Ասա. «Մի՞ թե դուք չեք հավատում Նրան՝ Ով ստեղծել է աշխարհը երկու օրում, և Նրան հակառակորդներ եք արել (առաջ աստվածներին): Չե որ նա աշխարհների Տերն է: Նա կանգնացրել է երկրի վրա անսասան լեռներ, օրինել է նրան և կարգավորել է երկրում սնունդը չորս ամրող օրվա ընթացքում, հարցնողների (արարման մասին) համար: Հետո նա դիմել է երկնքին, որը ծուխ էր, և ասաց նրան ու երկրին. «Եկեք, կամա կամ ակամա»: Նրանք ասացին. «Մենք կզանք կամովին»: Նա յոթ երկինք ստեղծեց երկու օրվա մեջ և ներշնչեց (որոշեց) ամեն երկնքին իր կամքը: Մենք զարդարեցինք լուսավոր աստղերով ներքնի երկինքը և արել ենք դրանք (լուսավոր աստղերը) որպես պաշտպանություն (զաղտնալսող հրեշներից): Այդպիսին է Ամենակարողի, ամենագետի կարգավորումը»»: (41:9-12)

Սահիդ Կուրբը ասել է. «Այդ երկու օրերը, երբ Ալլահը ստեղծեց երկիրը և այն երկու օրերը, երբ Ալլահը ստեղծեց լեռներն ու Իր օրենքները դրեց ամեն օրվա համար: Նրանց երկարությունը մեզ հայտնի չի, նրանք սովորական 24 ժամ չեն հանդիսանում, ինչպես մենք սովորել ենք այսօր: Այդ օրերը կարող են ժամանակաշրջաններ լինեն, որոնց ընթացքում երկիրը ձևավորվել ու սկսել է գոյություն ունենալ: Ալլահն ավելի լավ գիտի»:

Մարդու ստեղծման իմաստությունը

Հիմա՝ երբ մենք ասացինք երկրի ստեղծման մասին, առաջանում են այնպիսի կարևոր հարցեր որոնցից են մարդու ստեղծման իմաստը, այդ արարածի նպատակը: Ալլահը պարզեցրել է դա Իր խոսքերում.

«Ես ստեղծեցի ջիներին և մարդկանց, որ երկրպագեն Ինձ: Ես նրանց ստեղծածների կարիքը չունեմ և ոչ էլ ուզում եմ, որ կերակրեն Ինձ: Ճշմարիտ, Ալլահը Նվիրող է և Ամենակարող»: (51:56-58)

Այս կյանքն այնչիսինը չի՝ ինչպես պնդում են աթեիստները՝ առանց հարության, պատվի կամ հատուցման: Այդ ամենը մշտական չէ, դա ընդամենը ժամանակավոր փուլ է: Ալլահն, Ամենաքարձրյալն ասում է.

«Նրանք ասացին. «Կա միայն մեր աշխարհիկ կյանքը: Մենք մահանում և ծնվում ենք, և մեզ ոչինչ չի ոչնչացնում բացի ժամանակից»: Նրանք այդ մասին ոչինչ չգիտեն: Նրանք ընդամենը ենթադրություններ են անում»: (45:24)

Ինչքան դժվար կլիներ մարդու համար առանց նպատակ ունենալու ապրելը: Ամեն մարդ ինչպես կարիք ունի բավարարել բնական և մարդկային ցանկությունները, այնպես էլ կարիք ունի հոգևոր բավարարությանը: Դա կարող է լինել միայն Ալլահին լսելու միջոցով: Ալլահի մասին գիտելիքը չի կարող հավաքվել միայն սեփական գիտակցությունից: Այդ գիտելիքի համար հարկավոր է դիմել Աստվածային Գրությանը: Կարևոր է, որ մարդը հասկանա կյանքի նկատմամբ աթեիստական մոտեցումը չի հանդիսանում է մեր օրվա տեխնոլոգիական ձեռքբերումների արդյունքը: Դա շատ հին հավատք է, որը պահպանվում է անհիշելի ժամանակներից: Այն դարեր շարունակ պահպանվել է հավատք չունեցողներով: Ալլահն, Ամենաքարձրյալն ասում է.

«Մենք նրանց մոտ առաքյալ ենք ուղարկել նրանցից. «Երկրպագեք Ալլահին, քանի որ չունեք այլ աստվածություն բացի Նրանից: Սի՞թե դուք չեք վախենում»: Նրա ազգից ճանաչված մարդիկ, որոնք չեն հավատում և ծխուում էին Վերջին կյանքի հանդիպումը, որոնց Մենք առատաձեռն պարզեներ տվեցինք այս կյանքում, ասացին. «Սա ընդամենը մեր նման

մարդ է: Նա ուսում է, այն ինչ ուսում եք, խմում՝ ինչ խմում եք: Եթե որոք ենթարկվելու եք մարդու, որը ձեր նման է, ապա կորցնելու եք: Մի թե նա ձեզ խոստանում է, որ դուք հարություն եք առնելու մահվանից հետո և կդառնաք որսկոր և փոշի: Անհավատալի է, անհավատալի է ձեզ խոստացվածը: Այս աշխարհում մեր կյանքից բացի ոչինչ չկա: Մենք ապրում ու մահանում ենք, և հարություն չենք առնելու»: (23:32-37)

Առարյալների անհրաժեշտությունը

Պատմական վկայություններից մենք գիտենք, որ ողջ մարդկությունը սկսել է որպես մի ազգ, որ ապրում էր մի տեղում: Սակայն քանի որ մեր քանակը շատացավ սկսեցինք տարածվել տարբեր տեղերում: Ալլահն, Ամենաբարձրյալն ասում է.

«Սարդիկ հավատացյալների մի համայնք էին, սակայն անհամաձայնություններ ունեցան: Եվ եթե նախկինում քո Աստծու խոսքը չիներ, ապա նրանց անհամաձայնությունները հարթեցված կլինեին»: (10:19)

Աշխարհի տարբեր մասերում տարածվելու արդյունքում ձևավորվեցին սովորույթներ ու լեզուներ, որոնք այսօր մեզ տարբերում են իրարից: Քանի որ մարդկանց ապրելու վայրերը տարածվեցին ողջ երկրագնդով, Աստվածը ամեն խմբին մի առաքյալ ուղարկեց, որ հիշեցնի Միակ Աստծու հավատքի մասին:

Ճշմարիտ, Ալլահը գթասիրտ է: Նա երբեք ազգը անտեղին չի պատմել, միայն առաքյալ ուղարկելուց հետո, որ նրանց հասցնի Ալլահի ուղերձը: Մարգարեներն ու առաքյալները զգուշացնում էին իրենց ազգերին մոլորության մասին: Եվ գոյություն չունի մի ազգ, որի մոտ չի եկել Ալլահի առաքյալ: Ալլահն, Ամենաբարձրյալն ասում է.

«Մենք ուղարկել ենք քեզ ճշմարտությամբ, որպես ավետարեր և պահպանող լրաբեր, և չկա ոչ մի ազգ, որի մոտ պահպանող լրաբեր չի եկել»: (35:24)

Ալլահը մարգարեներ և առաքյալներ է ուղարկել, որ մարդկանց վերադարձնի միաստվածությանը: Ալլահն ասում է.

«Մենք ամեն համայնքին առաքյալ ենք ուղարկել. «Երկրպագեք Ալլահին և ձեռնպահ մնացեք չափերն անցնելուց»: Նրանց մեջ կան այնպիսինները, որոնց Ալլահը դրել է հարթ ճանապարհին, և այնպիսինները, որոնց արդարացիորեն մոլորություն էր տրված: Գնացեք երկրով ու տեսեք, թե ինչպիսինն էր անհավատների վերջը»: (16:36)

Ալլահը մարգարեներ ու առաքյալներ է ուղարկել, որ մարդիկ կասկած չունենան նրանում, թե ինչ է Ալլահը որոշել նրանց համար ապագա կյանքում: Ալլահն, Ամենաբարձրյալն ասում է.

«Մենք առաքյալներ ուղարկեցինք, որոնք ավետ էին տանում և պահպանում էինք, որպեսզի նրանց գալուց հետո մարդիկ Ալլահի դեմ ոչ մի համոզմունք չունենաին: Ալլահն ամենակարող և իմաստուն է»: (4:165)

Բոլոր մարգարեներն ու առաքյալները մարդիկ են եղել: Նրանք աստծո նման չեն և ոչ մի գերմարդկային հնարավորություն չունեն: Ալլահն օգնեց նրանց հրաշքների գործել: Ալլահն, Ամենաբարձրյալը ասում է.

«Մենք քեզանից առաջ առաքյալներ չենք ուղարկել, որոնք սնունդ չեն ընդունում և շուկա չեն գնում: Մենք ձեզանից ոմանց փորձություն արեցինք մյուսների համար՝ կցուցաբերե՞ք դուք համբերություն: Քո Աստվածը տեսնող է»: (25:20)

Ալլահը պարզեցրեց դա, որ համոզվի, որ ոչ ոք կասկած չի ունենա մարգարեների բնության մեջ: Ալլահն Ամենաբարձրյալն ասում է.

«Մենք քեզանից առաջ առաքյալներ ենք ուղարկել և նրանց ամուսիններ ու ժառանգորդներ ենք պարզել: Ոչ մի մարգարե չեր կարող նշան ցուցաբերել առանց Ալլահի թույլտվության: Մինչ ամեն ժամանակ կա կանխորոշում:» (13:38)

Մարգարեներն ու առաքյալները չունեն տիեզերքի գործերը դեկավարելու իշխանություն: Նրանք ոչ մի իշխանություն չունեն սեփական պաշտպանության նկատմամբ: Ալլահը, Ամենաբարձրյալը մարգարեների և առաքյալների մասին ասում է.

«Ասա. (ով Մուհամմեդ) «Չունեմ իմ համար ոչ օգուտ, ոչ էլ վնաս, բացի այն դեպքից, եթե Ալլահն է դա ցանկանում: Եթե իմանայի անհայտները, կրազնապատկեյի բարիքը և ոչ մի չարիք ինձ չեր մոտենա: Ճշմարիտ, ես ընդամենը մի նախազգուշացնող եմ, և հավատացյալների համար՝ ավետների առաքյալ» (7:188)

Ալլահի մեծ մարգարեները

Ալլահի բոլոր մարգարեներն ու առաքյալները ուղարկված են եղել մի ուղերձով: Ալլահն ասում է.

«Մի ՞թե նրանք այլ աստվածությունների սկսեցին երկրպագել, Նրա տեղը: Ասա. «Բերեք ձեր ապացույցները»: Սիա հիշացում նրանց համար՝ ովքեր իմ հետ են, և հիշեցում նրանց համար՝ ովքեր ապրել են ինձանից առաջ»: Սակայն նրանց մեծամասնությունը չգիտի ճշմարտության մասին և մեջքով է շրջվում: Մենք քեզանից առաջ ոչ մի մարգարե չենք ուղարկել, որին ներշնչած չլիներ. «Զկա աստվածություն բացի Ինձանից: Երկրպագեք Ինձ»: (21:24-25)

Միակ Ալլահին հավատալը հանդիսանում է բոլոր մարգարեների և առաքյալների իրենց ազգերին ուղղված հիմնական ուղերձը: Ալլահն, Ամենաբարձրյալն ասում է.

«Նա ձեր համար կրոնում դրեց այն՝ ինչ տվեց Նոյին այն ինչ Մենք տվեցինք քեզ, այն ինչ Մենք տվեցինք Իբրահիմին, Մովսեսին և Հիսուսին. Պահպանեք կրոնն ու մի հեռացեք կարծիքներով կապված դրա հետ Ծանր է բազմաստվածների համար այն ամենին ինչին դու նրանց կոչում ես Ալլահն ընտրում է Իր համար նրան, ում ցանկանում է և ուղղորդում դեպի Իրեն նրան, ով դիմում է Իրեն»: (42:13)

Ազգերի մարգարեներ և առաքյալներ ունենալու կարիքը

Ինչպես նշեցինք, մարդիկ կարիք ունեն մարգարեներ և առաքյալներ ունենալու մեջ այնպես, ինչպես սննդի ու ջրի կարիք ունեն, որ պահպանեն իրենց կյանքը: Գիտնական Իբն Ալ-Կայիմն ասել է.

«Չկա երջանկության ու հաջողության ձանապարհ առանց մարգարեների ու առաքյալների: Կարելի է տարբերել բարին ու չարը միայն առաքյալների միջոցով, որ մեզ փոխանցել են (հայտնությունը) Ալլահից: Ղեկավարվող մարդիկ տարբերվում են ուղերձին լսելու մեջ: Ուղերձն իմանալու անհրաժեշտությունն ավելի զգայուն է քան սննդի ու ջրի անհրաժեշտությունը: Մարդկության համար ղեկավարության կարևորության կարևորությունը նման է կետի համար ջրի կարևորությանը: Եթե նրան դուրս հանեն ջրից, ապա այն կմահանա: Նույն կերպով մարդկանց համար կարևոր է ղեկավարությունը:

Մարգարեներ և առաքյալներ ընտրելու մեջ Ալլահի իմաստությունը

Մարգարենության ուղերձը աստվածային պարզեցնելու մեջ առաջանական է: Դա մարդուն չի տրվում կախված լինելով նրա ծագումից, իշխանությունից կամ հասարակությունում գրադարանում տեղից: Ալլահն ասում է.

**«Ալլահը հրեշտակների և մարդկանց մեջ առաքյալներ է ընտրում:
Ճշմարիտ, Ալլահը Տեսնող և Լսող է»: (22:75)**

Ալլահն, Ամենաբարձրյալն ասում է.

«Մի քե նրանք նախանձում են այնինչին, որ Ալլահն ընծայել է մարդկանց իր գթասրտությունից: Մենք արդեն նվիրատրել ենք Իբրահիմի (Աբրահամի) ցեղը ուղերձով ու իմաստությամբ, և տվել ենք հսկայական իշխանություն»: (4:54)

Ալլահի մարգարեները նույն աստիճանի վրա չեն՝ Նա նրանցից որոշներին տվել է ավելի շատ նախապատվություն քան մյուսներին. Ամենաբարձրյալ Ալլահն ասում է

«Այդախինն են առաքյալները։ Մենք նրանցից որոշներին նախապատվություն ենք տվել մյուսների նկատմամբ։ Նրանց մեջ կային նաև այնպիսինները, որոնց հետ Ալլահը խոսացել է, իսկ նրանցից որոշներին Ալլահը բարձրացրել է մակարդակներից։ Մենք Մարիամի որդի Իսային (Հիսուսին) պարզեցել ենք պարզ նշաններ և աջակցել ենք Սուրբ Հոգով (Զիբրիլով)։ Եթե Ալլահը ցանկանար, ապա նրան հետևող երկրպագությունները չեն պատերազմի իրար դեմ այն բանից հետո, եթե նրանց մոտ հայտնվեցին պարզ նշանները։ Սակայն նրանք չկիսեցին կարծիքները՝ նրանցից որոշները հավատացին, իսկ որոշները՝ ոչ։ Եթե Ալլահը ցանկանար, ապա նրանք չեն պատերազմի իրար դեմ, սակայն Ալլահն անում է այն՝ ինչ ցանկանում է։» (2:253)

Մարդկության նախահայր Աղամի արարումը

Ալլահը նշանակեց, որ Նրա կողմից ընտրվածները բնակելու են Երկիրը։ Նրանք աշխատելու են և կառուցելու են այնտեղ։ Նրանք փորձվելու են նյութական աշխարհում, որ պարզվի, թե ով էր լսող ու բարեպաշտ, իսկ ով էր ապերախտ։ Ալլահն, Ամենաբարձրյալն ասում է.

«Ահա քն Աստվածը հրեշտակներին ասաց. «Ես երկրում երեց կնշանակեմ»։ Նրանք ասացին. «Մի թե Դու այնտեղ կրնակեցնես անարդարություն տարածողներին և արյուն թափողներին, այնժամ, եթք մենք Քեզ փառավորում ենք գովքով ու լուսավորում ենք Քեզ»։ Նա ասաց. «Ճշմարիտ, Ես գիտեմ այն՝ ինչ դուք չգիտեք»։ (2:30)

Աստծո իշխանությամբ երկրի վար առաջինը եղավ Աղամը՝ մարդկության նախահայրը։ Ալլահը ստեղծեց Աղամին ուրբաթ օրը, ինչպես նշված է հաղիսում.

«Լավագույն օրը, երբ արևը ծագեց դա ուրբաթն էր։ Այդ օրը Ալլահը ստեղծեց Աղամին, այդ օրը նա ընդունվեց երկնքում, և նույն օրը նա հեռացվեց այնտեղից, և վերջին ժամը կզա ուրբաթ օրը»։ (Մուսլիմ)

Այդ պատճառով Ալլահն ուրբաթ օրն ընդունեց մուտումանների համար շաբաթվա հանգստյան օր։ Աղամին բարձր կարգավիճակ էր տրված, Ալլահը հրամայեց խոնարհվել նրան հարգանքից ու պատվից

ելնելով, և բոլոր հրեշտակներն արեցին դա: Սատանան, որը հրեշտակներից մեկն էր, ժխտեց ենթարկվել նրան: Գոռողությունն ու հպարտությունը խանգարեցին նրան ենթարկվել Ալլահի կամքին: Ալլահն ,Ամենաբարձրյալը այդ մասին ասում է.

«Ահա քո Աստվածը հրեշտակներին ասաց. «Ես կավից մարդ կստեղծեմ: Երբ ես նրան կկերպանավորեմ ու Իմ հոգուց նրան կներշնչեմ, ապա կերկրպազեք նրան»: Բոլոր հրեշտակները առանց բացառության խոնարհվեցին նրա առաջ բացի Իբլիսից, որը գոռողություն ցուցաբերեց ու դառավ անհավատներից մեկը: Նա ասաց. «Ով Իբլիս, Ի՞նչը խանգարեց քեզ խոնարհվել նրա առջև՝ ում Ես ստեղծեցի Իմ երկու ձեռքերով: Դու գոռողացել ես, թե գերադաս ես»: Նա ասաց. «Ես նրանից լավն եմ : Դու արարել ես ինձ կրակից, իսկ նրան արարել ես կավից:» Նա ասաց. «Կորի այստեղից: Այսուհետև դու արտաքսված և ձեռնամիւելի ես: Եվ իմ անեծքը կհասնի քեզ մինչ Վերջին Օրը»: Նա ասաց. «Աստված, ինձ ժամանակ տուր մինչ Վերջին Օրը»: Նա ասաց. «Ճշմարիտ, դու նրանցից ես՝ ում ժամանակ է տրված մինչ Վերջին Օրը, որի ժամանակը որոշված է»: Նա ասաց. «Երդվում եմ Քո գորությամբ: Ես կգայթակղեմ բոլորին, բացի Քո ընտրյալ (կամ անկեղծ) ստրուկներից»: Նա ասաց. «Ահա ճշմարտությունը: Ես ասում եմ միայն ճշմարտությունը: Ես անմիջապես կլցնեմ Գեհեեր քեզանով ու բոլոր քեզ հետևողներով»: (38:71-85)

Ալլահն Իր իմաստությամբ Աղամին ու նրա հետնորդներին նշանակեց բնակեցնել աշխարհը: Այսուհետև Ալլահը ստեղծեց Եվային՝ Աղամի կնոջը:

Աղամի ու նրա կնոջ դրախտից արտորումը

Երբ սատանան հրաժարվեց խոնարհվել Աղամի առջև, նա կատարեց իր ճակատագիրը: Նա Ալլահից ասաց, որ նա մոլորության մեջ է մցնելու Աղամի հետնորդներին և տանի իր հետ չարի կացարան՝ դժոխք : Ալլան այդ մասին մեզ ասում է.

«Ահա քո Աստվածը հրեշտակներին ասաց. «Ճշմարիտ, ես կարարեմ չոր գրնագուն կավից մարդ: Երբ ես նրան կկերպանավորեմ ու Իմ հոգուց

նրան կներշնչեմ, ապա կերկրպագեք նրան»: Բոլոր իրեշտակները առանց բացառության խոնարհվեցին նրա առաջ բացի Իբլիսից, որը գոռողություն ցուցաբերեց ու դառավ անհավատներից մեկը: Նա ասաց. «Ով Իբլիս, դու ինչո՞ւ խոնարհվողների շարքում չես»: Նա ասաց. «Ինձ նման չի խոնարհվելր մի մարդու առջն, որին Դու ստեղծել ես չոր, զրնգուն կավից, որը ստացվել է կերպարանափոխված կեղտից»: Նա ասաց. «Կորի այստեղից: Այսուհետև դու արտաքսված և ձեռնամիսելի ես: Եվ իմ անեծքը կիասնի քեզ մինչ Վերջին Օրը»: Նա ասաց. «Աստված, ինձ ժամանակ տուր մինչ Վերջին Օրը»: Նա ասաց. «Ճշմարիտ, դու նրանցից ես՝ ում ժամանակ է տրված մինչ Վերջին Օրը, որի ժամանակը որոշված է»: Նա ասաց. «Այն բանի համար, որ Դու ինձ մոլորության մեջ ես դնում, ես կզարդարեմ նրանց համար երկրայինը և Ես կզայթակղեմ բոլորին, բացի Քո ընտրյալ (կամ անկեղծ) ստրուկներից»: (15:28-40)

Աղամի և Իբլիսի միջև թշնամությունը գոյություն ունի Աղամի ստեղծվելու պահից: Իբլիսը հսկում էր նրան և ձգտում էր, որ նա չենթարկվի Ալլահի օրենքներին: Երբ Իբլիսը հասկացավ, որ Ալլահը Աղամին թույլ չի տվել ուտել մի ծառից, նա համոզեց Աղամին ու նրա կնոջը ուտել այդ ծառի պտուղը: Աղամն ու Եվան աքսորվեցին երկնքից: Նրանք երկուսն էլ զղացին ու տիրել էին իրենց արածից, և Աստվածն ընդունեց նրանց ապաշխարությունը: Աստվածն, Ամենաբարձրյալը ասում է.

«Ահա Մենք իրեշտակներին ասացինք. «Խոնարհվեք Աղամի առջն»: Նրանք խոնարհվեցին, միայն Իբլիսը երաժարվեց: Մենք ասացինք. «Ով Աղամ, թշնամի քեզ ու քո կնոջը: Թող նա ձեզ դրախտից դուրս չհանի, այլապես դու կլինես դժբախտ: Այնտեղ դու քաղցած ու մերկ չես լինի: Այնտեղ դու չես տառապելու ծարավից ու շոգից»: Սակայն սատանան սկսեց շշնչալ նրան ու ասաց. «Ով Աղամ, քեզ ցու յց տամ հավերժության և իշխանության ծառը»: Նրանք երկուսն էլ կերան ծառի պտուղներից, և այդ ժամանակ նրանց համար տեսանելի դառան ամոթալի տեղերը: Նրանք սկսեցին իրենց դրախտային տերեններով ծածկել: Աղամը չենթարկվեց իր Աստծուն և ընկավ մոլորության մեջ: Հետո Աստվածն ընտրեց նրան, ընդունեց նրա ապաշխարությունն ու որեց հարթ ճանապարհի: Նա ասաց. «Դուրս եկեք այստեղից միասին և ձեզանից որոշները լինելու են այլերի թշնամիները: Եթե ձեզ Ինձանից ճշմարիտ դեկավարություն հայտնվի, ապա ենթարկվողը մոլորված և դժբախտ չի լինի: Իսկ Իմ Հիշացումից

հրաժարվողներին ծանր կյանք է սպասվում, իսկ Վերջին Օրը նրանք կույր արություն կառնեն»: (20:116:124)

Սատանայի (Իբլիսի) երկնային կացարանից աքսորվելուց անմիջապես հետո, իսկ Ադամը աքսորվել էր Ալլահին չենթարկվելու համար, Ադամի որդիները լսում էին Ալլահին ու երկրպագում էին միայն Նրան: Տասնյակ սերունդներից հետո մարդիկ սկսեցին կասկածել և շեղվեցին ճանապարհից: Այնուհետև Աստվածը մարզարեներ ու առաքյալներ ուղարկեց, որ ուղղեն մարդկանց դեպի Ալլահի ճանապարհը: Ադամից հետո Ալլահի առաջին առաքյալը Նոյն էր: Նրա ժամանակ բազմաստվածությունը սովորական երևույթ էր: Ալլահն, Ամենաբարձրյալը ասում է.

«Նուին (Նոյն) ասաց. «Աստված, նրանք չցեցին ինձ և հետևեցին այնինչին, որի հարստությունն ու երեխաները նրանց միայն կորուստներ են քերում: Նրանք ծանր խորամանկություն են նյութել և ասել. «Մի՛ հրաժարվեք ձեր աստվածներից՝ Բաղդայից, Սուվայից, Յագուսից, Յառուկից ու Նասրից»: Նրանք արդեն շատերին են մոլորեցրել: Անօրեններին մի տուր ոչինչ բացի մոլորությունից»»:ն(71:21-24)

Մարզարեներից ու առաքյալներից լավագույններն են հանդիսանում Ուլուլ Ազմ (մեծություն ունեցող) կոչվող հինգը: Նրանք են.

1. Մարզարե Նոյը

Նա Ալլահից ուղարկված առաջին մարզարեն է: Նա ուղարկված էր շիրկի (բազմաստվածության) գալուստից հետո: Մարդկանց վիճակը անդադար վատանում էր, և նրանք մոռացան յուր հավատքի հիմունքները, որ փոխանցված էին նրանց նախնիներից, որոնք , թորել էին ուժի մեջ Խսամի հավատքը: Ալլահն, Ամենաբարձրյալն ասում է.

«Մենք ուղարկեցինք Նուին (Նոյին) նրա ազգի մոտ. «Պահպանիր քն ազգը մինչ նրանց տանջող տառապանքներ գան»»: (71:1)

Նրանք երկրպագում էին հինգ կուռքերի Վուդդին, Սուվային, Յագուսին, Յառուկին ու Նասրին: Ալլահը, Ամենաբարձրյալը նրանց անունները բացատրում է Ղուրանում.

«և ասացին. «Մի՛ հեռացեք ձեր աստվածներից՝ Վադրայից, Սուլայից, Յազուսից, Յառուկից ու Նարից»»: (71:23)

Մարգարե Նոյը շատ բարեպաշտ ու ողջամիտ էր: Նա համբերատարությամբ կոչ էր անում իր ազգին դեպի Ճշմարտությունը: Այլահն ,Ամենաբարձրյալը ասում է.

«Նա ասաց. «Աստված, ես կոչ արեցի իմ ազգը ցերեկ և զիշեր, սակայն իմ քարոզները միյան արագացրեցին նրանց փախուստը: Ամեն անգամ, երբ կոչ էի անում նրանց, որ Դու ներես նրանց, նրանք մատերով փակում էին ականջներն ու փաթաթվում էին շորերով: Նրանք համառություն էին անում և հպարտությամբ գովաբանում էին: Այնուհետև ես բացահայտորեն էի կոչում նրանց: Այնուհետև ես դիմում էին նրանց ազգովի և խոսում էի նրանց հետ առանձին: Ես ասում էի. «Ներում խնդրեք ձեր Աստծուց, քանի որ նա ամեն ինչ ներում է»»: (71:5-10)

Չնայած բոլոր ջանքերին, շատերը դրժեցին ու հրաժարվեցին ուղերձից: Շատ քչերը հետևեցին նրան, իսկ անհավատները իր մարդկանց միջև շարունակում էին անհավատություններն ու չար ճանապարհները: Այդպիսով Ալլահը խլեց նրանցից անձրևը: Նոյը հայտնեց նրանց, որ նրանք կստանան անձրևը, եթե վերադարձան հավատքին, սակայն շուտով նրանք վերադարձան իրենց անհավատությանը: Անց կացնելով երկար տարիներ Ալլահի ճանապարհին կոչելով, սակայն պատասխան չգտնելով, նա վերջ ի վերջո Ալլահին աղաչեց, ասելով.

«Նուին (Նոյն) ասաց. «Աստված, երկրի վրա ոչ մի անհավատ մի թող: Եթե դու թողնես նրանց, ապա նրանք մոլորության մեջ կմցնեն քո ստրուկներին և կծնեն միայն մեղքերով լի անհավատներին»»: (71:26-27)

Ալլահը պատասխանեց նրա աղոթքին և հրամայեց նրան տապան կառուցել: Նոյը հմուտ ատաղձագործ էր, և ուղերձին հավատացողները օգնեցին նրան: Երբ տապանը պատրաստված էր, Ալլահը հրամայեց Նոյին հավաքել մեկական զույգ բոլոր կենդանիներից (եզ և որձ): Այդ ժամանակ Նա հրամայեց երկնքին անձրևել: Ալլահն, Ամենաբարձրյալը ասում է.

«Մինչ նրանց, Նուիի (Նոյի) ազգը առաքյալներին սուտասաններ էր համարում: Նրանք Մեր ստրուկին սուտասան համարեցին և ասացին. «Նա ազդեցության տակ է»: Նրանք զայրացնում և սպառնում էին նրան: Այդ ժամանակ նա կոչեց իր Աստծուն. «Ինձ հաղթահարեցին: Օգնի՞ ր ինձ»: Մենք բացեցինք երկնքի դարպասները, որտեղից սկսվեց ջուր թափվել, և

հեղեղեցինք երկիրը, որից մոռացվել էին բանալիները: Երկնքի ու երկրի ջրերը թափվեցին մի տեղ գործի համար, որը նախատեսված էր: Մենք տարանք նրա մեխերից ու տախտակներից տապանը: Այն լողաց Մեր աշքերի առաջ, ի հատուցում չհավատացողներին (կամ նրանց՝ ովքեր չեն հավատում): Մենք թողեցինք (նավը կամ Նոյի մասին պատմությունը) որպես նշան: Սակայն կա՞ն արդյոք հասկացողներ»: (54:9-15)

Մարզարե Նոյն ուներ երեք որդիներ՝ արարների և պարսիկների նախահայր Սաամին, աֆրիկացիների և եվրոպացիների նախահար Խաամին և ասիացիների նախահայր Յաֆիտին:

2. Մարզարե Աբրահամը (Իբրահիմ)

Նա հայտնի է որպես Խալիլ ար-Ռահման (ում Աստվածն ընտրելէ Նրա սիրո համար): Նրա ավագ որդին մարզարե Խսմայելն էր, իսկ երկրորդ որդին՝ Իսհակը(Խսահակը): Նրանց հետնորդներից են շատ մարզարեներ ու առաքյալներ: Ալլահն, Ամենաբարձրյալը ասում է.

«Փառք Ալլահին, որ իմ ծերության ժամանակ ինձ Խսմայելին և Խսահակին ընծայեց: Ճշմարիտ, իմ Աստվածը պատասխանում է աղոթքներին»: (14:39)

Ալլահն ընտրեց նրան, որ վերջինս հասցնի Նրա ուղերձը: Մարզարե Աբրահամն ապրում էր բազմաստվածների հասարակությունում: Նրանք երկրպագում էին կուռքերին ու աստղերին: Ալլահն ասում է.

«Ահա Իբրահիմն (Աբրահամ) ասաց իր հայր Ազարին. «Մի՞թե դու կուռքերին աստվածներ ես համարում: Ես տեսնում եմ, որ դու ու քո ազգը զտնվում եք ակնհայտ մոլորության մեջ»: Այդպես Մենք Իբրահիմին (Աբրահամ) ցույց տվեցինք երկնային և երկրային թագավորությունը, որ նա լինի համոզվածներից մեկը: Երբ զիշերը ծածկեց նրան իր մթությամբ, նա աստղ տեսավ և ասաց. «Ահա իմ Աստվածը»: Երբ արևը մայր մտավ նա ասաց. «Ես չեմ սիրում նրանց, ովքեր գլորվում են»: Երբ նա տեսավ ծագող լուսինը, ասաց. «Ահա իմ Աստվածը»: Երբ այն մայր մտավ, նա ասաց. «Եթե իմ աստվածն ինձ հարթ ճանապարհի չդնի, ապա ես կլինեմ մոլորված մարդկանցից մեկը»: Երբ նա տեսավ ծագող արևը, ասաց. «Ահա իմ Աստվածը: այն մյուսներից ավելի մեծ է»: Երբ այն մայր մտավ, նա

ասաց. «Ով իմ ազգ, ես չեմ մասնակցում նրան, որ դուք աստված եք համարում: Ես անկեղծորեն հառեցի իմ հայացքը այնինչին, որ ստեղծել է երկինքն ու երկիրը, և Ես բազմաստվածներին չեմ պատկանում»»: (6:74-79)

Նա գոհ չեր նրանով, որ նա դարձավ վկա իր ազգի: Նա գգում էր, որ պետք է, որ լինի Ալլահը, որն ավելի մեծ է քան այնինչը, որին երկրպագում էր նրա ազգը: Նա գիտեր, որ այդ կուռքերը հնարավորություն չունեն որևէ վնաս տան կամ որևէ օգուտ: Աբրահամը հաճախ էր վիճում իր ազգի հետ, օգտագործելով բանական փաստարկներ, ինչու այդ կուռքերը արժանի չեն ոչ մի հարգանքի: Նա ասաց, ինչպես Ալլահն է մեզ ասում.

«Կարդա նրանց համար Իբրահիմի (Աբրահամի) պատմությունը: Ահա նա իր հորն ու ազգին ասաց. «Ինչի՞ն եք դուք երկրպագում»: Նրանք ասացին. «Մենք երկրպագում ենք կուռքերին և անընդհատ տրվում ենք նրանց»: Նա ասաց. «Նրանք լսու՞մ են, երբ դուք կոչ եք անում նրանց: Նրանք օգնու՞մ են ձեզ: Նրանք ձեզ վնասու՞մ են»: Նրանք ասացին. «Մենք տեսել ենք, որ մեր հայրերն էին այդպես անում»: Նա ասաց. «Դուք տեսել լ եք, թե ինչ եք երկրպագում ձեր հայրերի հետ: Նրանք բոլորն իմ թշնամիներն են, բացի աշխարհների Աստծուց, Որն արարել է ինձ ու որել Ճշմարիտ ճանապարհին, Որն ինձ սնունդ և ջուր է տալիս, Որն բուժում է ինձ, երբ ես հիվանդանում եմ, Որն մեղցնում է ինձ և հետո հարություն է տալիս, Որը ես հուսում եմ, որ կների իմ մեղքերը Վերջին օրը: Աստված, ինձ իշխանություն տուր (մարգարեռություն կամ գիտելիք) և միացրու ինձ Ճշմարիտներին»: (26:69-83)

Մարգարե Աբրահամը շարունակում էր կոչել իր մարդկանց դեպի Ալլահի ճանապարհը՝ միակ Աստծո հավատին և մի կողմ թողնելով այն ամենն ինչին նրանք երկրպագում էին: Սակայն նրանք հրաժարվեցին նրա ուղերձից ու նույնիսկ փորձեցին սպանել նրան, սակայն Ալլահը փրկեց նրան: Ալլահն այդ մասին մեզ ասում է.

«Նա ասաց. «Մի՞թե դուք Ալլահի փոխարեն երկրպագում եք այնինչին, որը ունակ չի օգուտ կամ վնաս տալ: Թուի, ձեզ ու այնինչին որ երկրպագում եք Ալլահի փոխարեն: Մի՞թե դուք չեք խելքի գա»: Նրանք ասացին. «Այրեք նրան և օգնեք ձեր աստվածներին, եթե դուք գործելու եք»: Մենք ասացինք. «Ով կրակ, Իբրահիմի (Աբրահամի) համար եղիր սառը և

փրկող»: Նրանք ուզում էին վնասել նրան, սակայն Մենք այնպես արեցինք, որ նրանք ավելի մեծ վնասում հայտնվեն»: (21:66-70)

Անդադար քարոզից հետո Ալլահը հրամայեց Աբրահամին վերցնել իր կնոջը՝ Հիջարին ու նրանց որդի Իսմայելին դեպի Մեքքա: Այնտեղ Ալլահը հրամայեց նրանց կառուցել Քաաբան: Իսմայել մարգարեի հետնորդներից եկավ Ալլահի վերջին մարգարե Մուհամմեդը, որն ուղարկված էր ողջ մարդկությանը: Ալլահն ,Ամենաբարձրյալը ասում է.

«Ահա ասաց Իբրահիմը (Աբրահամը). «Աստված, Այս քաղաքն անվտանգ արա և պտուղներով լցրու բնակիչներին, որոնք հավատում էին Ալլահին ու Վերջին Օրվանը»: Նա ասաց. «Իսկ անհավատներին Ես թույլ կտամ ոչ երկար ժամանակով օգտվել պտուղներից, իսկ այնուհետև կստիպեմ նրանց տառապել կրակի մեջ: Ինչքան պղծված է այդ գալստյան վայրը»: Ահա Իբրահիմն (Աբրահամ) ու Իսմայելը բարձրացրեցին Տան (Քաաբայի) հիմքը. «Տեր, ընդունիր մեզանից: Ճշմարիտ, Դու լսող և խմացող ես: Տեր, մեզ քեզ ենթարկվածներ արա, իսկ մեր հետնորդներից՝ քեզ ենթարկված համայնք: Ցույց տուր մեզ երկրպագման ծեսերը և ընդունիր մեր ապաշխարությունը: Ճշմարիտ, Դու ապաշխարություն ընդունող և գթասիրտ ես: Տեր, նրանց առաքյալ ուղարկիր նրանցից մեկին, որը կկարդա նրանց քո այարները, Կսովորեցնի Գրությունն ու խմաստությունը և կմաքրի նրանց: Ճշմարիտ, Դու խմաստուն և հզոր ես»»: (2:126-129)

3. Մովսես (Մուսա) մարգարեն

Այդ նա է, ում մասին Ալլահն ասում է.

«Երբ Մուսան (Մովսեսը) եկավ Մեր կողմից նշանակված տեղը նշանակված ժամանակ, Աստվածը խոսեց նրա հետ: Նա ասաց. «Աստված, երևա ինձ, որ ես տեսնեմ քեզ»: Նա ասաց. «Դու Ինձ չես տեսնի, սակայն նայիր սարին: Եթե այն մնա իր տեղում, ապա դու կտեսնես Ինձ»: Երբ նրա Աստվածը ցուցադրեց Իրեն սարի վրա, Նա այն փոշիացրեց, և Մուսան (Մովսեսը) ընկավ անզիտակից վիճակում: Գիտակցության գալով, նա ասաց. «Զինջ ես Դու: Ես մեղանչում եմ քո առաջ, և ես հավատացողներից առաջինն եմ»»: (7:143)

Մարգարե Մովսեսը Ղուրանում մեջբերվել է 129 անգամ, որը նրան անում է Ղուրանում ամենաշատը մեջբերվող մարգարե: Աստվածը նրան երկու հրաշք տվեց. առաջինը եղավ, երբ նրա զավազանը օձ դառավ, Ալլահի կամքով: Երկրորդ հրաշքը եղավ, երբ նրա անգույն ձեռքը գեղեցիկ զարդարվեց: Այդ նշանները տրված էին Մովսեսին, որ նա կարողանա համոզել փարավոնին նրա ճանապարհի սխալներում և Իսլամն ընդունելու մեջ: Ալլահն, Ամենաբարձրյալը ասում է.

«Մովսեսն ասաց. «Ով փարավոր, ես աշխարհների Աստծո առաքյալն եմ: Ինձ Ալլահի մասին միայն Ճշմարտությունն ասելն է թույլատրված: Ես ձեզ պարզ նշան եմ բերել ձեր Աստծուց: Ուղարկի ր իմ հետ Խորայելի որդիներին»: Նա ասաց. «Եթե դու նշան ես բերել, ապա ցույց տուր, եթե չես ստում»: Նա նետեց իր զավազանը և այն օձ դառավ: այնուհետև նա հանեց ձեռքը, որը սպիտակ դառավ տեսնողների համար»: (7:104-108)

Ալլահը նրան Եգիպտոսի փարավոնին և նրա ազգին էր ուղարկել, որ նրանց կոչ անի միակ Աստծո հավատին և բոլոր կեղծ աստվածներին մոռանալուն: Ալլահն, Ամենաբարձրյալը ասում է.

«Փարավոնն ասաց. «Ով իմաստուն, ես ձեր համար ինձանից բացի որևէ աստված չգիտեմ: Ով Համան, կավի վրա կրակ վարի և իմ համար զմբեթ կառուցիր, որ ես կարողանամ բարձրանալ Մովսեսի աստծո մոտ: Ճշմարիտ, ես կարծում եմ, որ նա սուտասաններից մեկն է»»: (28:38)

Մարգարե Մովսեսը իմաստությամբ և գեղեցիկ խոսքերով կոչ արեց փարավոնին դեպի միակ Ալլահը: Սակայն փարավոնը գնաց նրա դեմ, և հավաքեց այդ ժամանակվա բոլոր մոզերին Մովսեսին հաղթելու համար: Մովսեսը հաղթեց, իսկ նրա զավազանները Ալլահի կամքով օձեր դառան և կուլ տվեցին կախարդների նետած զավազանները: Ալլահը մեջբերում է այդ պատմությունը.

«Փարավոնի ազգից մի իմաստուն ասաց. «Ճշմարիտ, նա իմացող կախարդ է: Նա ցանկանում է հանել ձեզ ձեր երկրից: Դուք ի՞նչ խորհուրդ կտաք»: Նրանք ասացին. «Մեր և նրա եղբոր ժամանակներում հավաքողների տարածեք քաղաքներում, որ նրանք քո մոտ բերեն բոլոր իմաստուն կախարդներին»: Կախարդներն եկան փարավոնի մոտ ու ասացին. «Եթե մենք հաղթենք, ապա մեզ փոխիհաստուցում է հասնում»: Նա ասաց. «Այս, դուք կլինեք մոտիկներից որոշները»: Նրանք ասացին. «Ով Մովսես, կամ դու կնետես, կամ մենք կնետենք»: Նա ասաց. «Նետեք»: Երբ նրանք նետեցին մարդկանց մեջ վախ և հաճոյություն առաջացավ նրանց

կախարդանքից: Մենք Մովսեսին ներշնչեցինք. «Նետի՞ր քո գալացանը»: Եվ ահա այն (օձը) սկսեց կուլ տալ նրանց մտածածը: Ճշմարտությունը հաստատվեց, և անվավեր ճանաչվեց նրանց արածը: Նրանք պարտվեցին այնտեղ և առանց փառքի վերադարձան: Եվ այդ ժամանակ կախարդները հանձնվեցին»: (7:109-120)

Փարավոնն ու նրա ազգը չէին հավատում Աստծո խոսքին, և Ալլահը պատմեց նրանց շատ փորձություններով: Ալլահը նրանց վրա ուղարկեց ջրհեղեղ, մորեխներ, ոջիլներ, գորտեր, և արյուն, որպես նշաններ Ալլահից: Սակայն նրանք հրաժարվեցին և պահպանեցին անհավատությունը: Ամեն պատիժ հանվեց Մովսեսի օրինված աղոթքներով: Ամեն իրադարձությունից հետո նրանք վերադառնում էին և պահպանում էին անհավատությունը: Ալլահն այդ մասին ասում է.

«Նրանք ասացին. «Ինչ նշաններ էլ որ ցույց տաս, որ կախարդես մեզ դրանցով, մենք քեզ չենք հավատա»: Մենք նրանց վրա ջրհեղեղ, մորեխներ, ոջիլներ, գորտեր և արյուն ուղարկեցինք որպես տարբեր նշաններ: Սակայն նրանք հպարտ էին, մեղսավոր ազգ էին: Երբ պատիժը հասավ նրանց, նրանք ասացին. «Ով Մովսես, աղոթիք մեր համար քո Աստծուն այն մասին, որ Նա քեզ խոստացել է: Եթե դու մեզ ազատես փորձություններից, ապա մենք կհավատանք քեզ և կազատենք Խրայելի որդիներին»: Երբ Մենք նրանց ազատեցինք պատիժներից մինչ որոշ ժամանակ, որին նրանք անմիջապես պետք է հասնեին, նրանք խախտեցին խոստումը»: (7:132-135)

Դրանից հետո Ալլահը հրամայեց Մովսեսին գիշերը հեռանալ իր ազգի հետ միասին Եգիպտոսից, որ նրանք կարողանան ազատորեն կայացնել իրենց հավատքը: Երբ փարավոնն իմացավ նրանց հեռանալու մասին, նա իր զորքերի հետ սկսեց հետապնդել նրանց: Մովսեսն ու նրա մարդիկ հասել էին ծովի ափին, իսկ հետո Խրայելի որդիները բացականչեցին. «Փարավոնը կբռնի՝ մեզ»: Մովսեսը, որ ուներ Ալլահի լիարժեք վստահությունը, գալազանով հարվածեց գետնին և օվկիանոսում ետ քաշվեց, ճանապարհ բացելով նրանց համար, որով նրանք անցան Ալլահի կամքով: Այնուհետև Ալլահը պահպանեց Մովսեսին ու նրա ազգին ու վերացրեց փարավոնին օվկիանոսում: Ալլահն Ամենաբարձրյալը ասում է.

«Երբ երկու ամրոխները տեսան իրար, Մովսեսի հետևորդներն ասացին. «Մեզ անմիջապես կհասնեն»: Նա ասաց. «Օ ոչ: Իմ հետ իմ

Աստվածն է, և նա ինձ հարթ ճանապարհը ցույց կտա»: Այդ ժամանակ Մենք Սովուսին ներշնչեցինք. «Հարվածիր քո գավազանով ծովին»: Այն բաժանվեց երկու մասի, և նրա ամեն մաս դառավ հսկայական լեռան պես: Մենք այդտեղ մոտեցրինք մյուսներին (փարավոնի զորքին): Մենք փրկեցինք Սովուսին և բոլոր նրա հետ եղածներին, այնուհետև խորտակեցինք բոլոր մնացածին»: (26:61-66)

Այնուհետև Ալլահն, Ամենաբարձրյալը ասում է.

«Մենք Խրայելի որդիներին անց կացրեցինք ծովով, իսկ փարավոնն ու նրա զորքը հետևեցին նրանց, անարդարորեն և թշնամորեն: Երբ փարավոնը սկսեց խորտակվել, նա ասաց. «Ես հավատում եմ, որ չկա աստված բացի նրանից, որին երկրպագում են Խրայելի որդիները: Ես մուսուլմաններից մեկը դառա»: Ալլահն ասաց. «Միայն հիմա: Իսկ առաջ դու չսեցիր և անարդարություն տարածողներից երբ: Այդօր մենք կփրկենք քո մարմինը, որ դու նշան լինես նրանց համար, ովքեր կլինեն քեզանից հետո»: Ճշմարիտ, շատ մարդիկ սաստում են Մեր նշաններին»: (10:90-92)

4. Մարգարե Մուհամմեդը

Մարգարե Մուհամմեդը հանդիսանում է վերջին մարգարեն ու առաքյալը: Նա ուղարկված էր Ալլահից ողջ մարդկությանը: Նա Աբրահամի որդի Խսմայելի ընտանիքից էր: Նա ծնվել է Մեքքայում, հոր մահվանից ամիսներ անց: Ավելի ուշ մահացավ նրա մայրը, և նրա մասին հոգ էր տանում նա պապը՝ Աբդուլ-Մութթալիբը, իսկ այնուհետև նրա հորեղբայր Աբու Թալիբը:

Մարգարե Մուհամմեդը հովիկ էր, Մեքքայում հոգ էր տանում գառների հոտի մասին: Նա լավ հայտնի էր նրանով, որ հուսալի էր և երբեք չէր ստում: Մեքքացիները նույնիսկ նրան ասում էին «Ճշմարիտ», և «հուսալի»: Մարդիկ ամեն անգամ մեկնելուց առաջ վստահում էին նրանց իրենց թանկարժեք իրերը:

Երբ նա քառասուն տարեկան դառավ, Ալլահը Գաբրիել հրեշտակին ուղարկեց նրա մոտ և Մուհամմեդին ողջ մարդկության համար մարգարե և առաքյալ արեց: Նա 13 տարի եղավ Մեքքայում, մարդկանց կոչելով դեպի Ալլահի ճանապարհը, այնուհետև նա ներգաղթեց Մեղինայի

ժաղավուրդը պատասխանեց և ընդունեց Իսլամը: Նա մահացավ 63 տարեկանում: Նրա հետևորդները տարածեցին Իսլամի ուղերձը ողջ աշխարհով և մինչ օրս մարդիկ ողջ աշխարհով Իսլամ են ընդունում:

Ալլահի առաքյալ Հիսուսը

Իմրան ընտանիքը

Մարգարեներ և առաքյալներ ուղարկվում էին Նոյից հետո անդադար: Ալլահն, Ամենաբրձրյալը ասում է.

«Եվ Մուհամեդը ձեզանից ոչ մի տղամարդու հայրը չէր, այլ Ալլահի առաքյալն ու մարգարեների կնիքը, Վերջին մարգարեն :Ալլահը գիտի ամեն ինչի մասին:» (33:40)

Մարգարեն Հիսուսը Իսրայելի որդիների վերջին առաքյալն է և հատուկ տեղ է զբաղեցնում մուսուլմանների սրտերում: Նա հայտնեց իր ազգին Մուհամեդ մարգարեի գալստյան մասին և նա Ղուրանում մեջբերվում է 25 անգամ:

Ալլահը Ղուրանում մեզ փոխանցել է որոշ իրական մասնիկներ, որ Նա հայտնել է Հիսուսին: Ալլահը նաև նշում է Հիսուսի մայր Մարիամի կյանքի որոշ մանրամասնություններ: Նա շատ հայտնի է նրանով, որ մաքուր էր և ողջախոհ: Ալլահն, Ամենաբրձրյալը ասում է.

«Ճշմարիտ, Ալլահը աշխարհներից ընտրեց Աղամի, Նոյի, Իբրահիմի և Իմրանի տոհմին: Նրանց մի մասը մյուսի հետնորդն է: Ալլահը տեսնող և իմացող է:» (3:33-34)

Մարիամը, (թող Ալլահը օրինի նրան)

Ալլահը գովաբանեց Իմրանի դուստր Մարիամին՝ Հիսուսի Մարգարեյի մորը: Ալլահը նկարագրում է Մարիամին որպես մաքուր, ողջախոհ և բարեպաշտ: Ալլահն, Ամենաբարձրյալը ասում է.

«Ինչպես նաև Իմրանի դուստր Մարիամը, որը պահպանեց ողջախությունը, և մենք նրա (հազուսի քանցքի միջով) Մեր Հոգու (Զիբրիլի) միջոցով) նրան ներշնչեցինք: Նա հավատաց իր Աստծո Խոսքին և Նրա Գրությանը և հնազանդներից մեկն էր»: (66:12)

Դուրանը պարզեցնում է, որ Մարիամն իր սեփական մոր խնդրանքի պատասխանն էր: Ալլահն, Ամենաբարձրյալը ասում է.

«Ահա ասաց Իմրանի կինը. «Աստված, Ես խոստում եմ տվել Քեզ նվիրել իմ արգանդում գտնվողին: Ընդունիր ինձանից, չէ որ Դու լսող և իմացող ես»: (3:35)

Այդ խնդրանքը անուղղակի պատճառ էր, որով նա և նրա հետնորդները եղան Ալլահի պաշտպանության տակ սատանայից: Աստվածը պահպանեց Մարիամին և դաստիարակեց նրան օրինությամբ: Ալլահն ասում է.

«Երբ նա ծնեց նրան, ասաց. «Աստված, ես աղջիկ ծնեցի, սակայն Ալլահն ավելի լավ գիտեր, թե ում է նա ծնել: Չէ որ տղան աղջկա նման չէ: Ես նրան Մարիամ անվանեցի և խնդրում եմ Քեզ պաշտպանել նրան ու նրա հետնորդներին արտաքսված և ծեծվող սատանայից»: Աստվածն ընդունեց նրան հոյակապ կերպով, մեծացրեց նրան արժանի կերպով և հանձնեց նրան Զաքարյային: Ամեն անգամ, երբ Զաքարյան մտնում էր նրա մոտ աղոթարան, նա նրա մոտ սնունդ էր գտնում: Նա ասաց. «Ով Մարիամ, Ո՞րտեղից քեզ դրանք»: Նա պատասխանեց. «Դա Ալլահից է, քանի որ Ալլահը սնունդ է ընծայում առանց հաշվի ում ցանկանում է»: (3:36-36)

Մարիամը շատ բարեպաշտ էր Ալլահին երկրպագելու մեջ: Նա իր սերնդի լավագույն կինն էր: Մարգարեն (Խ.Ա.Ռ.Ն.) ասել է.

«Կան չորս կանայք, որոնք հասել էր Կամալ (լիակատարության) մակարդակին»:

Նա նշեց, որ Հիսուսի մայր Մարիամին որպես նրանցից մեկը: Ալլահն, Ամենաբարձրյալը ասում է.

«Ահա ասացին հրեշտակները. «Ով Մարիամ, ճշմարիտ, Ալլահն ընտրել է քեզ, մաքրել և բարձրացրել է աշխարհների կանանց նկատմամբ: Ով Մարիամ, հնագանդ եղիր քո Աստծոն, ենթարկվիր և երկրպագիր Նրան երկրպագողների հետ»»: (3:42-43)

Ալլահը Ղուրանում մի ամբողջ գլուխ անվանեց նրա պատվին: Դա 19-րդ գլուխն է Ղուրանում: Դա Ղուրանի միակ գլուխն է, որ կոչված է կնոց պատվին, իսկ նրանում Ալլահը գովաբանում է Մարիամին: Նման գովք ոչ մի նախկին Գրությունում չկա:

Մարգարե Հիսուսը

Ալլահը Մարիամին ավետ բերեց մարգար Հիսուսի գալստյան մասին: Ալլահն ,Ամենաբարձրյալը ասում է.

«Ահա հրեշտակները ասացին. «Ով Մարիամ, Ալլահը ուրախացնում է քեզ ավետիսով Նրանից, որի անունը կլինի Սեսսիա Իսա (Հիսուս), Մարիամի (Մարիայի) որդի, պատվավոր այս աշխարհում և մյուսում, և նա կլինի նրանց մեջ ովքեր ամենամոտն են Ալլահին: Նա խոսելու է մարդկանց հետ դեռ օրորոցում և լինելու է ճշմարիտներից մեկը»: Նա ասաց. «Աստված, ես ինչպես ս կարող եմ որդի ունենալ, եթե ինձ ոչ մի տղամարդ չի հպվել »: Նա ասաց. «Քանի որ Ալլահն արարում է այն ինչ ցանկանում է: Եթե Նա որոշում է կայացնում, ապա Նա ընդամենը պետք է ասի. «Եղի՛ր» և դա լինում է: Նա նրան Գրություն ու իմաստություն կսվորեցնի, Թառութափ(Թորա) և Ինջիլ (Ավետարան)»»: (3:45-48)

Նրա ծնունդը.

Մարգարե Հիսուսի ծնունդը հրաշք էր: Չնայած Հիսուսը ծնվեց կույսից, նա արժանի չի և երկրպագություն չի պահանջում: Եթե Հիսուսը իր ծնվելու համար արժանի լիներ ամեն տեսակի երկրպագության, ապա Աղամ մարգարեն նրանից ավելի արժանի կլիներ, քանի որ նա ստեղծվեց առանց հոր կամ մոր: Ալլահն,Ամենաբարձրյալը ասում է.

«Ճշմարիտ, Հիսուսը Ալլահի առաջ նման է Արամին: Նա ստեղծեց նրան փոշուց, հետո ասաց. «Եղի՛ք», և նա եղավ: Ճշմարտությունը քո Աստծուց է: Այդ պատճառով մի եղիր կասկածողների շարքից: Ով կսկսի հակածառել քեզ դրանից հետո Գրերի վերաբերյալ, կասես. «Եկեք կանչենք մեր որդիներին և ձեր որդիներին, մեր կանանց և ձեր կանանց, և մեզ ինքներս ու ձեզ ինքներիդ, իսկ այնուհետև կաղոթենք և Ալլահի ամենքը կանչենք սուտասանների վրա»: Ճշմարիտ, սա ճշմարիտ պատմություն է: Չկա այլ աստվածություն, բացի Ալլահից, Ալլահը հզոր և խմասուն է: Եթե նրանք հրաժարվեն, ապա Ալլահին է հայտնի անբարշտություն տածողների մասին»: (3:59-63)

Ալլահը ստեղծեց Հիսուսին, ինչպես ստեղծեց բոլոր արարածներին: Ալլահը Ղուրանում ասում է Հիսուսի ծննդյան բոլոր փորձությունների մասին.

«Հիշիր Գրության մեջ Մարիամին, Մարիային: Ահա նա հեռացավ իր ընտանիքից դեպի արևելք և թաքնվեց նրանցից քողի ետևում: Մենք նրա մոտ ուղարկեցինք մեր Ոգուն (Զիբրիլին), և նա կանգնեց նրա դիմաց գեղեցիկ կառուցվածք ունեցող մարդու կերպարանքով: Նա ասաց. «Ես դիմում եմ Գրասրտին, որ Նա պաշտպանի ինձ քեզանից, եթե դու միայն աստվածավախ ես»: Նա ասաց. «Ճշմարիտ, ես ուղարկված եմ քո Աստծուց, որ քեզ մաքուր որդի պարզեւեմ»: Նա ասաց. «Ինչպե՞ս կարող եմ որդի ունենալ, եթե ինձ տղամարդ չի դիպչել և ես անառակ չեմ եղել»: Նա ասաց. «Ահա այդպե՞ս: Քո Աստվածն ասել է. «Դա Իմ համար հեշտ է: Մենք նրան մարդկանց համար նշան և Սեղանից ողորմություն կանենք: Այդ գործն արդեն որոշված է»»: Նա կրեց նրան (հղիացավ) և նրա հետ գնաց մի հեռու տեղ: Ծննդաբերման ցավերը նրան տարան մի պալմայի արմավենու տակ, և նա ասաց. «Ավելի լավ կլիներ, եթե սրանից առաջ մահացած լինեի և ընդմիշտ մոռացված»: Այդ ժամանակ նա (Հիսուսը կամ Զիբրիլը) նրա տակից նրան կոչ արեց. «Մի՛ տիրի: Աստվածը քո համար քո տակ առվակ է ստեղծել: Պալմայի հիմքը շարժիր և քո վրա ընկնելու են թարմ փշատներ: Կեր, խմիր և ուրախացիր: Եթե որևէ մարդ տեսնես, ապա կասես. «Ես Գրասրտին խոստացել եմ լոել և այսօր մարդկանց հետ չեմ խոսելու»: Նա եկավ իր հարազատների մոտ նրան տանելով: Նրանք ասացին. «Ով Մարիամ, դու ծանր արարք ես արել: Ով Ահարոնի քույր, քո հայրը պիղծ մարդ չեր, և քո մայրը անառակ չեր»: Նա ցույց տվեց նրան և նրանք ասացին. «Ինչպե՞ս կարող ենք խոսել օրորոցի երեխայի հետ»: Նա (Հիսուսը) ասաց. «Ճշմարիտ, ես Ալլահի ստրուկն եմ: Նա ինձ Գրություն է

պատվիրել և ինձ մարզարե է արել: Նա ինձ օրինյալ արեց, ուր ել որ լինեմ, և պատվիրեց ինձ նամազ անել և զաքյաթ վճարել, մինչ ողջ լինելս: Նա ինձ հարգելի է արել իմ մոր դիմաց և ինձ գոռող ու դժբախտ չի արել: Խաղաղություն ինձ իմ ծննդյան օրը և այն օրը, երբ ես կմահանամ, և այն օրը, երբ ես հարություն կառնեմ»: Այդպիսինն է Մարիամի որդի Հիսուսը: Այդպիսինն է այն ճշմարիտ խոսքը, որի վրա նրանք հիմնվում են: Այլահին նման չի որդի ունենալը: Նա ջինջ է: Երբ Նա որոշում է ընդունում, ապա բավական է, որ ասի. «Եղի՛ր», և դա լինում է»: (19:16-35)

Ալլահն, Ամենաբարձրյալը ասում է.

«Հիշատակիր նաև նրան՝ ով պահպանել է ողջախոհությունը (Մարիամին): Մենք Մեր հոգու (Զիրքիլի) միջոցով նրա մեջ ներշնչել ենք և արել ենք նրան ու նրա որդուն (հիսուսին) նշան աշխարհների համար»: (21:91)

Հիսուսի մարդկային բնույթը

Դուրանք պարզորեն ասում է, որ Հիսուսը մարդ էր, որին ընտրել էր Ալլահը, որ փոխանցի իր ազգին հավատ դեպի Միակ Ալլահը: Ալլահն, Ամենաբարձրյալը ասում է.

«Մարիամի որդի Մեսահան ընդամենք առաքյալ էր: Մինչ նա նույնպես եղել են առաքյալներ, իսկ նրա մայրը՝ անկեղծ կին: Նրանք երկուսն էլ սնունդ էին ընդունում: Նայիր թե Մենք ինչպես ենք նրանց պարզեցնում գիտելիքը: Իսկ այնուհետև նայիր, թե ինչքան են նրանք հեռացել ճշմարտությունից»: (5:75)

Աննահին նման չի կին կամ երեխա ունենալը: Հայտարարել, որ նա Աստծո որդի է, իսկապես մեծ մեղք է հանդիսանում: Ալլահն, Ամենաբարձրյալը ասում է.

«Նրանք ասում են. «Գթասիրտն Իրեն որդի է վերցրել»: Դրանով դուք մեծ չարագործություն եք անում: Երկինքը պատրաստ է հալվել, երկիրը պատրաստ է շրջվել, իսկ լեռները պատրաստ են փոշիանալ նրանից, որ նրանք Գթասիրտին որդի են տալիս: Գթասիրտին նման չէ որդի ունենալը: Երկնքում և երկրում ամեն ոք կհայտնվի Նրա մոտ որպես ստրուկ»: (19:88-93)

Ոչինչ չի կարող Աստծուն հավասար լինել՝ նա գործընկերներ չունի: Ալլահն, Ամենաբարձրյալը ասում է.

«Ասա. «Նա Միակ Ալլահն է, Բնքնաբավարար Ալլահը: Նա չի ծնել և չի եղել ծնված, և Նրան հավասարը չկա»»: (112)

Մարդիկ դարեր շարունակ պնդում էին, որ Աստվածը երեխա է ունեցել: Արաք բազմաստվածները պնդում էին, որ Աստվածն ամուսնացավ Զիների, Հրեշտակների՝ իր դուստրերի հետ: Ալլահն, Ամենաբարձրյալը ասում է.

«Հարցրու նրանց, թե ինչո՞ւ քո Աստվածը դուստրեր ունի, իսկ նրանցը որդիներ: Թե՞ Մենք հրեշտակներին կին ենք ստեղծել և նրանք ներկա էին այդ ժամանակ: Ճշմարիտ, իրենց սուտասանությամբ նրանք ասում են: «Ալլահը ծնել է»: Ճշմարիտ, նրանք սուտասաններ են: Մի՞ թե նա ընտրեց դուստրերին և բարձրացրեց նրանց որդիների նկատմամբ: Ձեզ ի՞նչ է եղել: Ինչպե՞ս եք դուք դատում: Չհիշացնե՞մ ձեզ խրատը: Թե՞ դուք պարզ ապացույց ունեք: Բերեք ձեր Գրությունը, եթե դուք ճշմարտությունն եք ասում: Նրանք բարեկամական կապեր են հաստատել Նրա և ջիների միջև, սակայն ջիները զիտեն, որ նրանք հավաքված են լինելու (անհավատները հավաքվելու են Գեհենայում կամ ջիները հավաքվելու են հաշվետվության համար): Ալլահն ավելի բարձր է նրանց նշանակածից: Դա չեն անում միայն Ալլահի ընտրյալ (կամ անկեղծ) ստրուկները»: (37:149-160)

Ալլահն, Ամենաբարձրյալը ասում է.

«Հրեաներն ասացին. «Ուզեիրը (Էզրրան) Ալլահի որդին է»: Քրիստոնյաներն ասացին. «Մեսսիան Ալլահի որդին է»: Նրանք իրենց քերաններով ասում են բառեր, որոնք նման են նախկին անհավատների խոսքերին: Թող Ալլահը վերացնի նրանց: Ինչքան հեռու են նրանք ճշմարտությունից: Նրանք Ալլահից բացի այլ աստվածներ ընդունեցին իրենց քահանայապետներին ու վանականներին, ինչպես նաև Մարիամի որդի Մեսսիային: Նրանց հրամայված էր երկրապագել միայն մի Աստծու, որից բացի չկա աստվածություն: Նա ավելի բարձր է այնինչից, որ նրան հավասարեցնում են»: (9:30-31)

Ղուրանը պարզորեն ասում է, որ յուրաքանչյուրը ով հավատում է, որ Հիսուսը աստված է, Աստծո որդի կամ Եռյակի մաս, աջակցում է մի

համոզմունք, համաձայն որին նա հակասում է Հիսուսի ուղերձին, և այդպիսով անհավատ է լինում կրոնին: Ղուրանը բացատրում է, որ Հիսուսի ուղերձը դա Միակ Ալլահի հավատքն էր: Ալլահն ասում է.

«Չին հավատում նրանք, ովքեր ասում են. «Ալլահը Մարիամի որդի Մեսսիան է»: Մեսսիան ասել է. «Ով ԽորաԵլի զականեր, երկրպագեք Ալլահին՝ իմ և ձեր Աստծուն»: Ճշմարիտ, Ալլահին հավասարներ ընդունողներին Նա արգելել է Դրախտը: Նրա կացարանը Գեհենան է լինելու և անօրենների համար օգնականներ չեն լինելու: Չին հավատում նրանք, ովքեր ասում են. «Ալլահը երրորդն է երրորդությունում»: Զկա արարիչ, բացի այն Միակ Աստծուց, եթե նրանք չհրաժարվեն իրենց ասածներից, ապա անհավատներին տանջող տառապանքներ կհասնեն: Մի՞ թե նրանք չեն ապաշխարելու Ալլահի դիմաց և Նրանից ներում չեն խնդրելու: Չե որ Ալլահը ներողամիտ և գթասիրտ է»: (5:72-74)

Ղուրանը մեջբերում է շատ բանական ապացույցներ, որոնք ասում են Ալլահի միակ Աստված լինելու մասին: Նա անում է իր ցանկությունը: Նա նաև հստակեցնում է, որ բոլոր հրաշքները, որոնք կատարվել են Հիսուսի միջնորդությամբ, եղել են Նրա կամքով: Հիսուսն իշխանություն չի ունեցել, որ պաշտպանի ինքն իրեն Ալլահի հրամաններից: Ալլահն, Ամենաբարձրյալը ասում է.

«Չին հավատում նրանք, ովքեր ասացին. «Ճշմարիտ, Ալլահը Մարիամի որդի Մեսսիան է»: Ասա. «Ո՞վ կարող է գոնե շատ քիչ խանգարել Ալլահին, եթե նա ցանկանում է վերացնել Մարիամի որդի Մեսսիային, նրա մորն ու երկրում բոլոր գտնվողներին»: Ալլահին է պատկանում երկինքը, երկիրն ու դրանց միջև եղածները: Նա ստեղծում է ինչ ցանկանում է: Ալլահը կարող է ամեն ինչ»: (5:17)

Աստվածը նախազգուշացնում է հրեաներին ու քրիստոնյաաներին խոսել իրենց մարգարեների մասին, եթե տեղյակ չեն նրանցից: Նա նաև ասում է, որ Հիսուսը սովորական մարդ է: Ալլահն, Ամենաբարձրյալը ասում է.

«Ով Գրերի մարդիկ: Ավելորդություն մի ցուցաբերեք ձեր կրոնում և ասեք Ալլահի մասին միայն ճշմարտությունը: Հիսուս Քրիստոսը՝ Մարիամի որդին միայն Ալլահի առաքյալ է, և Նրա Խոսքը («Եղի՛ր» –ու եղավ), որ ուղղաված էր Մարիամին, և մի ոգի (որ ստեղծվեց) Նրանից (Ալլահից) (Գաբրիելը փոխանցել է Ալլահի խոսքը Մարիամին և նրեշնչել

Է Հիսուսի հոգին նրա արգանդը): Հավատացեք Ալլահին ու նրա առաջալներին և մի ասեք. «Երրորդություն»: Դադարեք, քանի որ այդպէս ավելի լավ կլինի ձեր համար: Քանի որ Ալլահը Միակն ու Յուրօրինակն է, շատ Փառավոր ու Բարձր, որ երեխա ունենա: Նրան է պատկանում այն՝ ինչ երկնքում է և այն՝ ինչ երկրի վրա է: Բավական է, որ Ալլահն է ամեն ինչի կարգավորողը: Քրիստոսը երբեք չէր ժխտի բարձր ինքնազնահատումի կամ ինքնազովաբանումի պատճառով լինել Ալլահի ծառան, ոչ էլ հրեշտակները, (Ալլահի) մոտ են: Հավատացողներին ու Ճիշտ արարքներ արածներին Նա հսկայական պարզեներ կտա և նույնիսկ կրազմապատկի դրանք Իր գթությամբ: Իսկ ովքեր ցածրեցուցիչ են համարել Նրան երկրպագելը և գոռոզություն են ցուցաբերել, տանջող տառապանքներ կստանան Նրանից: Նրանք բացի Նրանից չեն գտնի օգնական և հովանավոր»: (4:171-173)

Հիսուս մարգարեի մարգարեությունը

Յուրաքանչյուր մուսուլման համարում է, որ բոլոր մարգարեները ու առաջալները պարտք են ունեցել փոխանցել Միակ Աստծո հավատքը բոլոր մարդկանց: Մուսուլմանները սիրում և հարգում են բոլոր նրանց: Նաև Ալլահը հրամայել է պաշտպանել նրանց բոլորին: Ալլահն, Ամենաբարձրյալը ասում է.

«Եթե նրանք հավատան այնինչին, որ դուք եք հավատում, ապա գնում են հարթ ճանապարհով: Եթե նրանք հրաժարվեն, ապա կհեռանան ճշմարտությունից: Ալլահը քեզ կազատի նրանցից, քանի որ Նա լսող և իմացող է: Ասա. «Այդպիսինն է Ալլահի կրոնը: Իսկ ու մ կրոնը կարող է ավելի լավը լինել Ալլահի կրոնից: Միայն Նրան ենք մենք երկրպագում»»: (2:137-138)

Մինչ մարգարե Մովսեսի գալը Խրայելի զավակները ցածրացված էին և ստիպված էին կատարել սև, ծանր գործ: Ալլահն, Ամենաբարձրյալը ասում է.

«Ահա Մենք փրկեցինք ձեզ փարավոնի ցեղից: Նրանք ձեզ ահավոր տանջանքների էին ենթարկում, սպանում էին ձեր որդիներին և ողջ էին

թողնում ձեր կանանց: Դա ձեր համար մեծ փորձություն (կամ մեծ գթություն) էր ձեր Աստծուց»: (7:141)

Այսուհետև Ալլահն օրինեց նրանց մարզարե Մովսեսին և նրանց վիճակը բարելավվեց: Ալլահն, Ամենաբարձրյալը ասում է.

«Մենք ժառանգություն ենք պարզել Մեր կողմից օրինված արևելյան և արևմտյան երկրները նրանց, ում թույլ ենք համարել: Կատարվեց քո Աստծո Իսրայելի որդիների մասին հիասքանչ խոսքը, քանի որ նրանք համբերություն ցուցաբերեցին: Մենք քանդեցինք այն, ինչ ստեղծել ու կառուցել էր վարավոնն ու նրա ազգը»: (7:137)

Դրանից հետո Իսրայելի զավակները հեռացան Աստծո ճանապարհից, այդ պատճառով Աստվածը նրանց ուղարկեց մարզարե Հիսուսին, որ նրանց ետ տանի դեպի հարթ ճանապարհ: Ալլահն, Ամենաբարձրյալը ասում է.

«Նրանց հետևից Մենք ուղարկեցինք Մարիամի որդի Հիսուսին Տառատում ուղարկվածի ապացուցով: Մենք նրան Ինջիլ (Ավետարան) պարզեցինք, որում կար Ճշմարիտ դեկավարություն և լույս, որն ապացուցում էր Տառատում ուղարկվածը: Այդ Ճշմարիտ դեկավարություն և առակ էր աստվածավախների համար»: (5:46)

Մարզարե Հիսուսը կոչեց Իսրայելի զավակներին դեպի Միակ Աստծո հավատն, միայն Նրան երկրպագելն ու ավետարանի պատվիրանները պահպանելը: Ալլահն, Ամենաբարձրյալը ասում է.

«Երբ Հիսուսը հայտնվեց պարզ նշաններով, ասաց. «Ես եկել եմ ձեզ մոտ իմաստությամբ, որ բացատրեմ այն բանի մի մասը, որի համար տարածայնություններ ունեք: Վախեցե՛ք Ալլահից և ենթարկվե՛ք ինձ: Ճշմարիտ, Ալլահն իմ ու ձեր Աստվածն է: Ուրեմն երկրպագե՛ք նրան: Դա է հարթ ճանապարհը»»: (43:63-64)

Երբ մարզարե Հիսուսը տեսավ, որ նրանք չեն հավատում և հրաժարվում են Ճշմարտությունից ու հաստատական են իրենց անհավատության մեջ, նա կանչեց նրանց, ում հարգում էր տասերկուսին, որոնք հայտնի են որպես առաքյալներ: Նրանք ընդունեցին կոչը և հայտնեցին իրենց աջակցության մասին: Ալլահն, Ամենաբարձրյալը ասում է.

«Երբ Հիսուսն զգաց նրանց անհավատությունը, ասաց. «Ո՞վ կլինի իմ աջակիցը Ալլահի ճանապարհին»: Առաքյալներն ասացին. «Մենք Ալլահի օգնականներն ենք: Մենք հավատում ենք Ալլահին: Վկա եղիր, որ մենք մուտքածաններ ենք: Աստված մեր, մենք հավատում ենք Քո ուղարկածին և հետևում ենք առաքյալին: Գրիր, մեզ վկայողների շարքում»»: (3:52-53)

Մարգարե Հիսուսի նկարագրությունը

Ղուրանը մեզ տալիս է մարգարե Հիսուսի նկարագրությունը: Այդ նկարագրությունը պարունակում է նրա որոշ վարվելակերպը, ինչպես նաև նրա Գրության բնույթը: Ալլահն ասում է, որ Նա պաշտպանում էր Հիսուսին: Ալլահն, Ամենաբարձրյալը ասում է.

«Մենք Սովորելի Գրություն պարզեցինք և նրանից հետո ուղարկեցինք մի շարք առաքյալներ: Մենք Մարիամի որդի Հիսուսին պարզ նշաններ ենք պարզել և ամրացրել ենք Սուրբ Հոգով (Զիբրիլով): Մի թե ամեն անզամ, երբ առաքյալը ձեզ բերում էր այնինչը, որը ձեր հոգով չէր, դուք գորոգություն էիք դրսելորում, մի մասին սուտասան էիք անվանում, իսկ մյուսին՝ սպանում»: (2:87)

Ալլահը նաև նկարագրում է Հիսուսին որպես կատարյալ օրինակ լիակատար հավատքի և Ալլահի նկատմամբ անկեղծության տեսակետից: Մուտքածանները հավատում են, որ մարգարե Հիսուսը երկիր կիջնի ժամանակի վերջում: Ալլահն, Ամենաբարձրյալը ասում է.

«Իսկ երբ օրինակ են բերում Մարիամի որդուն, քո ազգը ուրախությամբ է բացականչում: Նրանք ասում են. «Մե՞ր աստվածներն են ավելի լավե, թե՞ նա»: Նրանք քեզ օրինակ են բերում միայն նրա համար, որ վիճեն: Նրանք հիմնավորվող մարդիկ են: Նա ընդամենը ստրուկ է, որին մենք բարություն ենք արել և օրինակ ենք արել Իսրայելի զավակների համար: Եթե Մենք ցանկանայինք, ապա կփոխարինեինք ձեզ հրեշտակներով, որոնք կլինեին ձեր ժառանգները: Ճշմարիտ, նա (Հիսուսը, կամ Ղուրանը, կամ Մուհամմեդը) հանդիսանում է Ժամի նախանշանը: Ընդհանրապես մի կասկածեք նրանում (Ժամում) և հետևեք Ինձ, Դա է հարթ ճանապարհը»: (43:57-61)

Հիսուսի ֆիզիկական նկարագրությունը

Ի՞նչ վերաբերվում է նրա ֆիզիկական տվյալներին ու հատկություններին, ապա մարզարե Մուհամմեդը (Խ.Ա.Ո.Ն.) նրան նկարագրել է հետևյալ խոսքերով.

«Չի եղել մարզարե իմ ու Հիսուսի միջև: Նա երկնքից երկիր կիջնի: Եթե դուք տեսնեք նրան, ապա իմացեք նրա նկարագրությունը: Նա միջնահասակ է, նա ոչ գեր է, ոչ էլ նիհար: Նրա մաշկի գույնն ունի կարմրավուն-սպիտակ երանգ»:

Մարզարեն ասել է.

«Մարզարեները տարբեր մայրերից ծնված եղբայրներ են: Զկա մարզարե Հիսուսի ու իմ միջև: Նա կկոտրի խաչը, կսպանի խոզերին ու կհեռացնի ջիզով (գլխահարկով): Նա կմիացնի մի հավատքի տակ ժողովուրդն ու միայն Իսլամը կհաղթանակի նրա դեկավարության ժամանակ: Նրա դեկավարության ժամանակ նեռը կսպանվի, անվտանգությունը կտարածվի երկրի վրա, կենդանիները կսկսեն ներդաշնակորեն ապրել իրար հետ: Երեխաները կխաղան օձերի հետ առանց վնասվելու: Նա դեկավարելու է մուսուլմաններին այնքան, ինչքան կցանկանա Ալլահը, այնուհետև կմահանա և մուսուլմանները կթաղեն նրան»: (Ահմադ)

Մարզարեն (Խ.Ա.Ո.Ն.) ասել է.

«Ես տեսել եմ Հիսուսին, Մովսեսին ու Աբրահամին: Ինչ վերաբերվում էր Հիսուսին ուներ վարդագույն երանգ և լայն կուրծք»: (Ալ-Բուխարի)

Մարզարեն (Խ.Ա.Ո.Ն.) պարզեցրեց, որ մի հավատքը բավական չէ, եթե չկա Հիսուսի Աստծո առաքյալ լինելու հավատքը: Մարզարեն (Խ.Ա.Ո.Ն.) ասել է.

«Ով վկայում է, որ չկա երկրպագելու արժանի աստված, բացի Ալլահից, և որ Նա Միակն է, և որ Մուհամմեդը Նրա ստրուկն է ու առաքյալը, և որ Հիսուսն Ալլահի ստրուկն է, որ ստեղծվել է Նրա

հրամանով, և որ գոյություն ունի Զաննա Դրախտ (Երկնային Կացարան) և Դժոխք, և որ հավատացյալը կմտնի Դրախտ, նույնիսկ եթե նա ոչ մի բարի գործ չի արել»:

Հավատալով, որ Հիսուսը Աստծո առաքյալ է, մարդը նաև մեծացնել պարզեց: Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն.) ասել է.

«Ով հավատում է Մարիամի որդի Հիսուսին որպես մարգարե և առաքյալ, իսկ հետո ինձ է հավատում, կունենա կրկնակի պարզեց»: (Ալ-Բուխարի)

Հիսուսն ու նեռ

Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն.) մեզ պարզեցրել է, որ Հիսուսի վերադարձը հանդիսանում է Դատաստանի Օրվա վերջին նախանշաններից մեկը: Դրա ապացույցներն են համարում Ալլահի, Ամենաբարձրյալի հետևյալ խոսքերը.

«Իսկ երբ օրինակ են բերում Մարիամի որդուն, քո ազգը ուրախությամբ է բացականչում: Նրանք ասում են. «Մե՞ր աստվածներն են ավելի լավե, թե՞ նա»: Նրանք քեզ օրինակ են բերում միայն նրա համար, որ վիճեն: Նրանք հիմնավորվող մարդիկ են: Նա ընդամենը ստրուկ է, որին մենք բարություն ենք արել և օրինակ ենք արել Խորայելի զավակների համար: Եթե Մենք ցանկանայինք, ապա կփոխարինեինք ձեզ հրեշտակներով, որոնք կլինեին ձեր ժառանգները: Ճշմարիտ, նա (Հիսուսը, կամ Ղուրանը, կամ Մուհամմեդը) հանդիսանում է Ժամի նախանշանը: Ըստհանրապես մի կասկածեք նրանում (Ժամում) և հետևեք Ինձ, Դա է հարթ ճանապարհը»: (43:57-61)

Մարգարեն Հիսուսի մեծության վերաբերյալ, նա կլինի նեռին սպանողը: Նա նաև տարածելու է Խալամի ուղերձը մեծ վշտի ժամանակ: Այդ ժամանակ բարին դիտարկվելու է որպես չար, իսկ չարը, որպես բարի: Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն.) ասել է.

«Ու մարդիկ, չի եղել ավելի մեծ դատաստան, Ֆիթնա, երկրի վրա մինչ Աղամի արարումը մինչև ժամանակների վերջ, քան ների, Դադայի, նկատմամբ դատաստանը: Բոլոր մարգարեներն են զգուշացրել իրենց մարդկանց այդ դատաստանի մասին: Ես վերջին մարգարեն եմ և դուք՝ վերջին ազգը, և նա կլինի այդ ժամանակ առանց կասկածի: Եթե նա դուրս գա մինչ ես ձեր հետ կլինեմ, ապա ես պաշտպանելու եմ յուրաքանչյուր մուտումմանին: Սակայն եթե նա դուրս գա իմ հեռանալուց հետո, ապա ամեն մուտումման ստիպված կլինի պաշտպանվել: Առաջին անգամ նա դուրս կգա Սիրիայի և Իրաքի միջև ընկած տարածքում, նա արևելք և արևմուտք կգնա խնդիրներ ստեղծելով ամեն տեղ, որ կայցելի: Ով Ալլահի ստրուկներ, ով մարդիկ հաստատական եղեք: Ես ձեզ կնկարագրեմ, ոչ մի մարգարեն չի նկարագրել նրան: Նա պնդելու է, որ նա աստված է, սակայն այս աշխարհում աստված չեք տեսնի: Նա մի աչք ունի, սակայն ձեր Աստվածը միաշքանի չի: Նրա աչքերի միջև գրած է «անհավատ», ամեն հավատացյալ կարող է կարդալ դա, անկախ նրանից, տառաձանաչ է թե ոչ: Ով փորձել է անցնի նրա դժոխքի միջով, թող աղոթի Ալլահին և կարդա Ալ-Կաֆ գլխի առաջին այաթները: Նա բերուինին ասում էր, եթե տեսնես, որ ես վերակենդանացրեցի քո ծնողներին, ապա կհավատա՞՞ ս ինձ: Բերուինը կասի, այո, և երկու սատանաներ կգան նրա ծնողների արտաքինով և կհրամայեն նրան ենթարկվել ադ. Դաջալին: Նա մարդ կսպանի կիսելով մարդուն, այնուհետև կասի. «Տեսեք իմ ստրուկին, ես նրան մասերի եմ բաժանել և ես կվերակենդանացնեմ նրան»: Այնուհետև նրա այդ մարդուն կհարցներ. «Ո՞վ է քո Աստվածը»: Մարդը, որը քիչ առաջ կտրված էր, կասի. «Ալլահը, որու Ալլահի թշնամին ես, որու ադ- Դաջալն ես, հիմա ես ավելի քան երբեկ համոզված եմ, որ դու ես այնինչը, որի մասին մեզ զգուշացրել է մեր մարգարեն»: Նա երկինքներից կհրամայի անձրևել երկրի վրա, որ բերի նրա լավագույն բուսականությունը: Նա կանցնի իրեն չհավատացողների կողքով և կկանգնեցնի երկրի վրայի ողջ բուսականությունը և բոլոր կենդանիները կմահանան: Նա կանցնի այլերի կողքով և կխնդրի հավատալ իրեն, և նրանք կհավատան, և նրանք մեծ հարստությունների տեր կլինեն: Նա կգնա այս աշխարհի ամեն անկյուն, բացի Մեքքայից ու Մեղինայից: Հրեշտակները այնտեղ թրերով կանգնած կլինեն: Մինչ նա դուրսը կսպասի, Մեղինան ցնցվելու է և կհայտնվեն բոլոր կեղծավորները և դուրս կգան և կմիանան նրան: Դա մաքրություն կլինի Ալլահի կամքով: Եղել է ասված. «Ու՞ թ են լինելու արաբներն այդ օրը»: Նա ասաց, որ նրանք քիչ են լինելու և նրանք բարեպաշտ իմամի (առաջատարի) հետ են

լինելու: Մինչ նա առավոտյան աղոթքն անի, Հիսուսը կիջնի: Աղոթքից հետո Հիսուսը կիրամայի, որ բացվեն դրները որի հետևում կլինի 70000 զորք: Նրանք բոլորը սպանված կլինեն և Հիսուսը կդեկավարի ինչպես իմաստուն ու արդար դեկավար: Նա կսպանի խոզերին, կկոտրի խաչն ու կդեկավարի Իսլամի օրենքներով»:

Մարգարե Հիսուսի հրաշքները

Որոշ անգամներ մարդիկ ժխտում են մարգարեի իրական լինելն ու չեն հավատում մինչև տեսանելի հրաշքի վկա լինելը: Այդպիսով դրա համար Ալլահն ուղարկեց իր մարգարեներին ու առաքյալներին հրաշքերով: Ալլահն, Ամենաբարձրյալը ասում է.

«Մենք քեզանից առաջ առաքյալներ ենք ուղարկել և կանայք ու երեխաներ ենք պարզեցնել նրանց: Ոչ մի առաքյալ չէր կարող ցուցաբերել նշանը, առանց Ալլահի թույլտվության: Ամեն ժամանակի համար կա նախազրություն»: (13:38)

Ամեն մարգարեի տրված էին հրաշքներ, որ նրանց ազգը կարողանա ընդունել նրանց և ընդհանուր լեզու գտնել նրանց հետ: Մարգարե Մովսեսի ազգը հայտնի է իր կախարդելու վարպետությամբ: Քանի որ Ալլահը հրաշքներով օգնեց Մովսեսին՝ նրա գավազանը հրաշքով օձ էր դառնում: Ալլահն, Ամենաբարձրյալը ասում է.

Կախարդներն եկան փարավոնի մոտ ու ասացին. «Եթե մենք հաղթենք, ապա մեզ փոխիհատուցում է հասնում»: Նա ասաց. «Այո, դուք կլինեք մոտիկներից որոշները»: Նրանք ասացին. «Ով Մովսես, կամ դու կնետես, կամ մենք կնետենք»: Նա ասաց. «Նետե՛ք»: Երբ նրանք նետեցին մարդկանց մեջ վախ և հաճոյություն առաջացավ նրանց կախարդանքից: Մենք Մովսեսին ներշնչեցինք. «Նետի՛ք քո գավազանը»: Եվ ահա այն (օձը) սկսեց կուլ տալ նրանց մտածածը: Ճշմարտությունը հաստատվեց, և անվավեր ճանաչվեց նրանց արածը: Նրանք ճնշված եղան այնտեղ և առանց փառքի վերադարձան: Եվ այդ ժամանակ կախարդները հանձնվեցին: Նրանք ասացին. »Մենք հավատում ենք աշխարհների աստծուն»: (7:113-121)

Մարգարե Հիսուսի ազգը հայտնի էր բժշկության լավ գիտելիքներ ունենալով: Ալլահն օգնեց հրաշքներ անելու մեջ, որոնք կարող էին հասկանալ նրա մարդիկ: Նա խոսում էր մարդկանց հետ, երբ նորածին էր: Նա կավից թռչուն պատրաստեց, իսկ հետո Ալլահի կամքով դրանում կյանք եղավ: Նա բուժում էր բորբոքերին և կույրերին: Նա Ալլահի կամքով նույնիսկ վերակենդանացրեց մահացածներին: Ալլահն ասում է.

«Ալլահը կասի. «Ով Հիսուս, Մարիամի որդի, հիշիր այն գթության մասին, որ Ես ասել եմ քեզ ու քո մորը: Ես աջակցեցի քեզ Սուրբ Հոգով (Զիբրիլով), ինչի շնորհիվ դու օրորոցիցդ, և մեծ լինելով, խոսում էիր մարդկանց հետ: Ես քեզ տվորեցրեցի Գրությունը, իմաստությունը, Սովույան Գրերն ու ավետարանը: Իմ թույլտվությամբ էիր կավից թռչուններ պատրաստում ու փշում դեպի վեր, և Իմ թույլտվությամբ էին դրանք թռչուններ դառնում: Իմ թույլտվությամբ էիր բուժում կույրին (կամ ծնված օրվանից տեսդությունից զրկվածին, կամ թույլ տեսդություն ունեցողին) և բորբոքին, Իմ թույլտվությամբ մահացածներին ողջ դուրս հանեցիր նրանց գերեզմաններից: Ես հեռացրեցի քեզանից (պաշտպանեցի քեզանից) Խրայելի զավակներից, երբ դու հայտնվեցիր պարզ նշաններով, իսկ նրանց մեջի անհավատներն ասացին, որ դա ընդամենը ակնհայտ կախարդություն է»: (5:110)

Մարգարե Հիսուսի ևս մի հրաշք էր տոնը: Նա աղոթեց Ալլահին այդ մասին և այն իրականացավ: Ալլահն, Ամենաբարձրյալը ասում է.

«Ահա առաքյալներն ասացին. «Ով Հիսուս, Մարիամի որդի, Կարո՞ն է քո աստվածը մեզ խնջույք ուղարկել»: Նա ասաց. «Վախեցե՛ք Ալլահից, եթե դուք հավատացյալ եք»: Նրանք ասացին. «Մենք ցանկանում ենք համտեսել դա, որ մեր սրտերը հանգստանան, որ մենք իմանանք, որ դու մեզ ճշմարտություն էիր ասում, և որ մենք դրա վկաները լինենք»: (5:112-113)

***Մարգարե Հիսուսն ու նրա Շիրկից
(բազմաստվածությունից) հրաժարվելը***

Ղուրանը նշել է, որ Հիսուսը մյուս մարգարեների ու առաքյալների նման ուղարկված էր Ալլահի կողմից: Նա ամրացրեց միաստվածության հավատը: Ալլահն, Ամենաբարձրյալը ասում է.

«Երբ Հիսուսը հայտնվեց պարզ նշաններով, ասաց. «Ես եկել եմ ձեզ մոտ իմաստությամբ, որ բացատրեմ այն բանի մի մասը, որի համար տարածայնություններ ունեք: Վախեցե՛ք Ալլահից և ենթարկվե՛ք ինձ»: (43:63)

Ղուրանը բացատրում է, որ Հիսուսը երբեք մարդկանց կոչ չի արել իրեն երկրպագելուն: Ալլահն, Ամենաբարձրյալը ասում է.

«Ահա Ալլահն ասաց. «Ով Մարիամի որդի Հիսուս, ասե՞լ ես մարդկանց. «Ինձ ու իմ մորը Ալլահի հետ միասին ընդունեք որպես աստված»»: Նա ասաց. «Դու գերմաքուր ես, Ինչպե՞ս կարող եմ ասել այն, ինչի իրավունքը չունեմ: Եթե ես ասեի, ապա Դու կիմանայիր այդ մասին: Դու գիտես իմ հոգու միջինը, իսկ ես չգիտեմ Քոնը: Ճշմարիտ, Դու գաղտնիքներն իմացող ես: Ես նրանց ոչինչ չեմ ասել, բացի Քո հրամայածից. «Երկրպագեք Ալլահին, իմ ու ձեր Աստծուն»: Ես նրանց մասին վկա էի մինչ իմ հեռանալը նրանցից: Երբ Դու հանգստացրեցիր ինձ, Դու սկսեցիր հետևել նրանց: Ճշմարիտ, Դու ամեն ինչի վկան ես: Եթե դու նրանց տառապանքների ես ենթարկում, ապա նրանք Քո ստրուկներն են: Եթե Դու ներես նրանց, ապա դու հզոր և իմաստուն են»»: (5:116-118)

Մարգարե Հիսուսի ավետը Սուհամմեդի զալուստի մասին

Յուրաքանչյուր մարգարեի ուղերձը նույնատիպ էր հավատքի վերաբերյալ: Ալլահն, Ամենաբարձրյալը ասում է.

«Ահա Ալլահը մարգարեներից վերցրեց պատվիրանը. «Ես ձեզ գրությունիս իմաստությամբ կօժտեմ: Եթե դրանից հետո ձեր մոտ առաքյալ հայտնվի, որը կհաստատի ձեր մոտ եղածի ճշմարտությունը, ապա դուք անմիջապես կհավատաք նրան ու կօգնեք նրան»: Նա ասաց.

«Դուք համաձա՞յն եք և ընդունո՞ւմ եք Իմ պատվիրանը»: Նրանք պատասխանեցին. **«Մենք համաձայն ենք»:** Նա ասաց. **«Ուրեմն վկայեք, և Ես կվկայեց ձեր հետ միասին»:** Դրանից հետո հրաժարվողները անարդարներ կլինեն»: (3:81-82)

Մարգարե Հիսուսը խնդրեց իր մարդկանց հավատալ գալիք առաքյալին: Նա խոսում էր Մուհամմեդ մարգարեի մասին: Ալլահն, Ամենաբարձրյալը ասում է.

«Ով Խրայելի զավակներ, հիշեք այն գթությունը, որ արել եմ ձեզ: Հավատարիմ եղեք Իմ պատվիրանին և Ինձ, և Ես հավատարիմ կլինեմ ձեր պատվիրանին: Միայն Ինձանից վախեցեք: **Հավատացեք Իմ ուղարկածին ի հաստատում այնինչի,** որ կա ձեր մոտ և մի եղեք առաջինը, ով հրաժարվում է հավատալ դրան: **Մի տվեք Իմ նշանները չնշին զնի դիմաց և միայն Ինձանից վախեցեք: Ճշմարտությունը սուտ մի արեք և մի թաքցրեք ճշմարտությունը, երբ զիտեք այդ մասին»:** (2:40-42)

Հիսուս Քրիստոսը այն բազում մարգարեներից մեկն էր, որ ուղարկվել էին Խրայելի զավակներին: Աստվածաշնչում գրված է, որ նա ասել է.

«Ես ուղարկված եմ միայն Խրայելի տան զոհված գառներին»: (Մաթեոս 15:24)

Երբ Հիսուսն ուղարկեց աշակերտներին Աստծո ճանապարհ, հանձնարարեց նրանց.

«Մի զնացեք հեթանոսների ճանապարհով և սամարացիներին քաղաք մի թողեք: Այլ զնացեք հատկապես Խրայելի տան զոհված գառների մոտ»: (Մաթեոս 10:5-6)

Հիսուսն ինքը հրեա էր, և նրա աշակերտները՝ նույնպես, և նրանք ուղղեցին իրենց կոչերը հրեաներին: Կարելի է միայն գուշակել, թե այժմ ինչ է նշանակում դա մեր համար, Հիսուսին որպես սեփական փրկիչ ընդունեղների մեծամասնության համար, լինել հեթանոսական, այլ ոչ թե «Խրայելի տան զոհված գառներին», ում էլ նա ուղարկված էր:

Այդ հատվածից մենք իմանում ենք, որ Հիսուսն ուղարկված չէր ողջ մարդկությանը: Ալլահն, Ամենաբարձրյալը ասում է.

«Եվ երբ Հիսուսը, Մարիամն որդին ասաց. «Ով Իսրայելի զավակներ, Ճշմարիտ, ես Ալլահի առաքյալն եմ ձեզ ուղարկված, հաստատում եմ, այն ամենը ինչ կա Թորայում ինձանից առաջ, որ ուրախացնում են մի առաքյալի գալուստով, որ կզա ինձանից հետո, նրա անունը Ահմադ է Սուհամեդ »: Երբ նա հայտնվեց նրանց պարզ նշաններով, նրանք ասացին “Սա ակնհայտ կախարդանք է:» (61:6)

Ռազմինների ու հոգևորականների վերաբերմունքը մարզարե Սուհամմեդին

Ռազմիններն ու հոգևորականները, որոնք լսել են մարզարե Սուհամմեդի (Խ.Ա.Ղ.Ն.) ուղերձի մասին, գիտեին, որ դա Ճշմարտություն էր: Մարզարեի Սուհամմեդի (Խ.Ա.Ղ.Ն.) կյանքի մանրամասնությունները հազվադեպ, սակայն մեջբերվում են նախկին գրություններում: Ալլահն, Ամենաբարձրյալը ասում է.

«Նրանք, ովքեր կհետևեն առաքյալին, անտառածանաչ մարզարեյին, որի մասին կա Թորայում և Ավետարանում :Նա մեզ հրամայում է կատարել այն, ինչ հաստատված է եւ մեզ արգելում է կատարել դատապարտելինն, հայտարարում է թույլատրելի բարին եւ արգելված վատը, ազատում է բերից ու աչքից: Նրանք, ովքեր հավատում են նրան, կհարգեն նրան, նրան կաջակցեն եւ կհետեւեն նրա հետ ուղարկված լուսին, անպայման հաջողության կհասնեն»: (Ղուրան 7:157)

Հրեայի դուստր Սաֆայան ասել է. «Իմ հայրն ու հորեղբայր Աբու Յասիրը մեկնեցին Ալլահի առաքյալի մոտ և վերադարձան օրվա վերջին լինելով հոգնած և տանջված: Ես փորձում էի թարմացնել նրանց, սակայն նրանք ինձ չէին նայում: Ես լսեցի, թե ինչպես իմ հորեղբայրը հարցրեց հորս. «Այդ նա է»: Ես լսեցի, թի ինչպես նա ասաց. «Մովսեսի Աստված, այդ նա է»: Հորեղբայրս հարցրեց. «Ի՞նչ պետք է անենք»: Նա ասաց. «Ես մինչ մահս կլինեմ նրա թշնամին»»:

Իսլամի ուղերձն ընդունեցին շատերը, որոնցից էր նաև Խաքեշայի (Եթովպիա) թագավոր Նաջաշին: Նա քրիստոնյա էր և լավ տեղեկացված էր Գրության մասին: Նա զիտեր, որ Հիսուսից հետո մարգարե է զալու: Ումմ Սալաման ասել է. «Երբ հասանք Խաքեշա, Նաջաշին շատ բարի էր մեր հանդեպ, նա մեզ պաշտպանություն տվեց և թույլ տվեց ազատորեն երկրպագել Ալլահին: Մենք չտուժեցինք ամեն դեպքում»:

Քուրայշները տանել չեն կարող այնտեղի մուսուլմանների համար անվտանգությունը, այդ պատճառով նրանք երկու հոգու ուղարկեցին և պահանջեցին մուսուլմաններին ոչնչացնել: Նրանք էին Ամր բին ալ-Ասն ու Աբդուլլա բին Աբի Ռաֆիան մինչ Իսլամ ընդունելը: Նրանք Թագավորի և նրա հոգևորականների համար թանկարժեք նվերներ էին բերել և կարողացան իրենց կողմը տանել որոշ պալատականների: Հեթանոս պատվիրակները հայտարարեցին, որ մուսուլման փախստականները պետք է արտաքսվեն Աբիսահինիայից (Եթովպիա), ինչպես նաև հանձնվեն նրանց, քանի որ հրաժարվել էին իրենց նախնիների կրոնից, իսկ նրանց առաջատարը տարածում էր իրենց և իրենց թագավորի կրոնից տարբերվող կրոն:

Թագավորը մուսուլմաններին դատարան կանչեց և խնդրեց բացատրել իրենց կրոնի հիմունքները: Արտագաղթած մուսուլմանները որոշեցին պատմել ողջ ճշմարտությունը, առանց հնարավոր հետևանքները հաշվի առնելու: Զաֆառ իբն Աբու Թալիբը ոտքի կանգնեց և հետևյալ խոսքով դիմեց թագավորին. «Ով թագավոր, մենք իշեցված էինք անբարոյականության ու շեղվածության խորքը մենք երկրպագում էինք կուտքերին, ապրում էինք կեղտի մեջ, սատկած կենդանու միս էինք ուտում և խոսում ամենատհաճ ձևով: Մենք հաշվի չենք առնում երկկողմանի հարգանքը, հյուրասիրության ու անկեղծության պարտավորությունները: Մենք չգիտեինք օրենքի մասին, սակայն զիտեինք ուժի մասին: Այսուհետև Ալլահը վերակենդանացրեց մեզանից մեկին, որի ողջամտության, անկեղծության ու մաքրության մասին լավ տեղեկացված էինք: Նա մեզ Միակ Աստծուն կոչեց և սովորեցրեց Նրան ոչինչ չհավասարեցնել: Նա մեզ արգելեց կուտքերին երկրպագել և հրամայեց ճշտախոս, հավատարիմ և գթասիրտ լինել, պաշտպանել հարևանների, հարազատների և մտերիմների իրավունքները: Նա մեզ արգելեց հայիոյել կանանց կամ գողանալ որբերի ունեցվածքը, նա հրամայեց մեզ ձեռնպահ մնալ ամեն չարիքից: Նա մեզ հրամայեց աղոթքներ անել, աղքատներին ու կարիքավորներին ողորմություն տալ, և

պահք կատարել: Մենք հավատում ենք նրան, մենք ընդունել ենք նրա ուսմունքն ու Ալլահին երկրպագելու ու Նրան հավասարը չտալու պարտադրանքը, և մենք թույլ տվեցինք Նրա թույլ տվածքը և արգելեցինք Նրա արգելածը: Այդ պատճառով մեր ազգը մեր դեմ դուրս եկավ, մեզ արտաքսեցին, որ ստիպեն հրաժարվել Ալլահին երկրպագել, երկրպագել կուրքերին և այլ տիաճություններին: Նրանք տանջում էին մեզ և վնասում, այդ պատճառով մենք եկանք ձեր երկիր, որ անվտանգության մեջ լինենք»:

Թագավորը շատ տպավորված էր այդ խոսքերից և մուսուլմաններին խնդրեց կարդալ Ալլահի հայտնություններից որոշները: Զիփառը կարդաց Մարիամ (19-րդ) սուրայի առաջին այաթները: Այդ սուրայում Ալլահն ասում է Հիսուսի ծննդյան մասին: Դրանից մինչ արցունքները ազդվեցին թագավորն ու եպիսկոպոսները: Նաշաշին (Նեգուար) բացականչեց. «Ասես այս խոսքերն ու այն խոսքերը ասված էին Հիսուսի մասին, դա լույսի ձառագայթներ են, որոնք գալիս են նույն աղբյուրից»: Դիմելով քուրայշների պատվիրակներին, նա ասաց. «Ես չեմ հրաժարվի նրանցից: Նրանք կարող են ազատորեն ապրել և աղոթել իմ արքայությունում, ինչպես ցանկանում են»:

Հաջորդ օրը պատվիրակները գնացին թագավորի մոտ ու ասացին, որ Մուհամմեդն ու նրա հետևորդները պնդում էին, որ Հիսուսը աստծո որդի չէր: Կրկին մուսուլմանները կանչվեցին և նրանց հարցրեցին նրանց Հիսուսի հանդեպ հավատքի մասին: Զաֆառը կրկին ոտքի կանգնեց ու պատասխանեց. «Մենք խոսում ենք Հիսուսի մասին այնպես, ինչպես մեզ սովորեցել է մեր մարգարեն՝ նա հանդիսանում է Ալլահի ստրուկը, Նրա առաքյալը, և նա ստեղծվել է Աստծո հրամանով»: Թագավորը նկատեց. «Մենք նույնպես, այդպես ենք համարում, օրինված ես դու և օրինված եք տերը»: պատվիրակներից ոմանք զայրացան, այդ պատճառով նա նրանց ասաց. «Դուք կարող եք ասել ինչպես ձեզ դուրեկան է, սակայն Հիսուսը Զաֆառի ասածից ոչինչով ավելին չէր»: Այնուհետև նա հաստատեց մուսուլմանների լիովին պաշտպանվածությունը: Նա վերադարձեց քուրայշների նվերները: Մուսուլմանները մինչ Մեդինա վերադառնալը շատ տարիներ ապրեցին այդ երկրում:

Այլ ոգեշնչող պատմություն է, որ եղավ Հռոմում որոշ քուրայշների և Իրակլիոս թագավորի միջև:

Աբդուլլա բին Արասից (Ալլահը գոհ լինի նրանից ու նրա հորից) փոխանցված է, որ Ալլահի առաքյալը (խաղաղություն և Ալլահի

ողորմությունը լինի նրան) նամակ էր գրել Իրակլոսին, որում նրան կոչ էր անում Խսամի: Նա ուղարկեց նամակը Դիհյա Ալ-Քալբիի միջոցով, որպեսզի նա իր հերթին փոխանցի Բասրայի ղեկավարին, իսկ վերջինս էլ փոխանցի Իրակլոսին: Իրակլոսը, ի նշան երախտագիտության, որ Ալլահը օգնեց նրան հաղթել պարսիկ զորքերին, ուղևորվեց Հոմսից Իլիա (Երուսաղեմ) ի շնորհակալություն պատերազմում Ալլահի օգնությանը: Եվ երբ Իրակլոսին հասավ Սուհամեդի (խաղաղություն և Ալլահի ողորմությունը լինի նրան) նամակը, նա կարդաց և ասաց. «Գտեք ինձ նրա ժողովրդից ինչ-որ մեկին, որ ես կարողանամ հարցնել այդ առաքյալի մասին»: Այդ ժամանակ Աբու Սուֆյան իբն Զարբը, Շեմում, Սիրիայում էր , որոշ մարդկանց հետ քուրեյշ ցեղից , որոնք եկել էին որպես առևտրականներ հաշտության ժամանակ, որը տեղի էր ունեցել Ալլահի Մարգարեյի և հեթանոսների միջև: Իբն Աբասն ասաց. «Աբու Սուֆյանը հայտնեց ինձ, որ նա եղել է Սիրիայում՝ քուրայշիտների մեջ, որ այնտեղ էին եկել առևտրի համար, այդ ընթացքում, երբ առաքյալը (խաղաղություն և Ալլահի ողորմությունը լինի նրան) խաղաղության մեջ էր քուրայշիտների անհավատների հետ: Աբու Սուֆյանն ասաց. «Եվ մեզ գտավ Իրակլոսի կողմից ուղարկվածը ինչ-որ տեղ Սիրիայում: Ես իմ գործընկերների հետ ուղևորվեցի Իլիա: Երբ մեզ տարան Իրակլոսի մոտ, նա նստած էր զահին, գլխին թագ էր դրված, իսկ նրա շուրջ նստած էին Հոռմի հեղինակավոր մարդիկ: Նա թարգմանչին ասաց. «Հարցրու նրանց, թե նրանցից ո՞վ է ամենամոտ բարեկամը այդ մարդու, որ պնդում է, թե ինքը առաքյալ է»: Աբու Սուֆյանն ասաց. «Մեր մեջ ես եմ այդ մարդու ամենամոտ բարեկամը»: Նա ասաց. «Իսկ ի՞նչ բարեկամական կապ է ձեր մեջ»: Ես պատասխանեցի. «Նա իմ հորեղբոր որդին է»: Այդ օրը մեր քարավանում Աբու Սանաֆի հետնորդներից ուրիշ ոչ ոք չկար: Իրակլոսը հրամայեց, որ ինձ մոտեցնեն նրան, իսկ ընկերներս՝ կանգնեն իմ հետևը: Հետո նա թարգմանչին ասաց. «Ասա Աբու Սուֆյանի ընկերներին, որ ես հարցնելու եմ այն մարդու մասին, որ պնդում է, թե ինքը մարգարե է: Եվ եթե ստելու է, ասեք, որ նա ստում է»: Աբու Սուֆյանն ասաց. «Երդվում եմ Ալլահով, եթե ամոթից չվախենայի, որ իմ ընկերները կպատմեն մարդկանց իմ ստի մասին, ես կստեի: Բայց ես ամաչում եմ, որ նրանք կպատմեն իմ մասին, և այդ պատճառով կասեմ Ճշմարտությունը»: Այնուհետև նա

թարգմանչին ասաց. «Հարցրու նրան, թե ինչպիսինն է այդ մարդու ընտանիքը: Ես պատասխանեցի. «Նա հայտնի ընտանիքից է»: Նա հարցրեց. «Չեզանից ինչ-որ մեկը ասե՞լ է դա մինչ նրա ասելը»: Ես ասացի.

«Ոչ»: Նա հարցրեց. «Նրան նախկինում մեղադրե՞լ եք ստի մեջ մինչ նրա մարզարե լինելու մասին ասելը»: Ես ասացի. «Ոչ»: «Նրա նախնիներից ինչ-որ մեկը թագավո՞ր էր»: Ես ասացի. «Ոչ»: Նա հարցրեց. «Նրան հետևում են հայտնի՝ մարդիկ, թե թույլերը»: Ես ասացի. «Թույլ մարդիկ»: Նա ասաց. «Նրանք շատանու՞մ են, թե քչանում»: Ես ասացի. «Շատանում են»: Նա ասաց. «Ինչ-որ մեկը լրու մ է կրոնը զայրույթի պատճառով, այն ընդունելուց հետո»: Ես ասացի. «Ոչ»: Նա ասաց. «Նա պայմանագրեր խախտու՞մ է»: Ես ասացի. «Ոչ, սակայն մենք հիմա չպատերազմելու պայմանագիր ենք կնքել, սակայն վախում ենք, որ նա խախտի»: Աբու Սուֆյանն ասաց. «Նա չասաց ոչ մի խոսք, որ կարող եմ ինչ-որ բան ավելացնել, ինչը կարող էր քչացնել մարզարեի արժանիքները, և որ ես չվախենայի ստով դատապարտված լինել»: Նա ասաց. «Դուք պատերազմու՞մ էիք նրա դեմ, իսկ նա ձեր դեմ»: Ես ասացի. «Այո»: Նա ասաց. «Ինչպե՞ս էին ընթանում ձեր մարտերը»: Ես ասացի. «Ընթանում էին տարբեր ձևերով, որոշ անգամներ մենք էինք հաղթում, որոշ անգամներ՝ նրանք»: Նա ասաց. «Իսկ ի՞նչ է նա ձեզ հրամայում անել»: Ես պատասխանեցի. «Նա հրամայում է մեզ երկրպագել միայն Ալլահին և ուրիշ ոչինչի, արգելում է երկրպագել մեր նախնիների աստվածներին: Նա հրամայում է աղոթել, ողորմություն տալ, մաքուր լինել հոգով, գողություն չանել, կատարել խոստումները և վերադարձնել ուրիշի ունեցվածքը»: Իմ պատասխանելուց հետո նա թարգմանչին ասաց. «Ասա նրան, որ երբ ես հարցրեցի, թե ինչ ընտանիքից է նա, դու պատասխանեցիր, որ նա հայտնի ընտանիքից է, հայտնի ընտանիքներից են ուղարկվում մարզարեներ: Երբ ես քեզ հարցրեցի, թե արդյոք ինչ-որ մեկը ասել է, որ նա մարզարե է նրանից առաջ, դու պատասխանեցիր. «ոչ»: Եթե ինչ-որ մեկը դա ասեր նրանից առաջ, ես կասեի, որ այդ մարդը ընդամենը կրկնում է այն, ինչը որ եկել է իրենից առաջ: Երբ ես քեզ հարցրեցի, թե արդյոք դուք կասկածում էիք նրան ստի մեջ, քո պատասխանը բացասական էր, այդ ժամանակ ես հասկացա, որ նա չէր կարող այդպես անել՝ ստել մարդկանց, ապա ինչպե՞ս կարող էր ստել Ալլահին: Երբ ես հարցրեցի քեզ, թե նրա նախնիներից մեկը եղել է թագավոր, դու ասացիր. «ոչ»: Եթե լիներ թագավոր, այդ ժամանակ ես կասեի, որ նա իր նախնիների թագն է պահանջում: Երբ ես հարցրեցի, թե հայտնի մարդիկ են հետևում նրան, թե թույլերը, դու ասացիր, որ թույլերը: Հենց նրանք են մարզարեների իրական հետևորդները: Ես հարցրեցի քեզ, թե նրանք շատանում են, թե քչանում, դու ասացիր, որ շատանում են: Ճիշտ այդպես էլ հավատը շատանում է մինչև վերջ: Եվ ես հարցրեցի, թե

արդյոք ինչ-որ մեկը լրել է կրոնը զայրույթի պատճառով, դու պատասխանեցիր, որ չի լրել: Սրտի մեջ մտած հավատքը ոչ ոք երբեք չի լրում: Ես հարցրեցի, արդյոք նա խախտում է իր խոսքը, դու ասացիր ոչ: Այդպիսինն են Մարգարեները՝ երբեք իրենց խոսքերը չեն խախտում: Ես հարցրեցի, արդյոք դուք պատերազմել եք իրար դեմ: Դու ասացիր, որ պատերազմել եք: Երբեմն հաղթում էիք դուք, երբեմն էլ՝ նրանք: Այդպիսինն են Մարգարեները՝ երբեմն փորձություններ են ունենում, սակայն հաղթանակը միշտ մնում է նրանց կողմը: Ես հարցրեցի, թե նա ինչ է հրամայում անել: Դու պատասխանեցիր, որ նա հրամայում է երկրպագել Միակ Աստծոն, և գուգընկեր չտալ Նրան, աղոթել, ճշմարտախոս լինել, մաքուր լինել հոգով, գողություն չանել, կատարել խոստումներն ու վերադարձնել ուրիշի ունեցվածքը: Դա մարգարեի եռթյունն է: Ես գիտեի, որ մարգարե է գալու, սակայն չէր մտածում, որ նա կլինի ձեր մեջ: Եթե քո ասածները ճիշտ են, ապա նա շուտով կգրավի այն տեղը, ուր ես գտնվում եմ: Եվ եթե նրա հետ հանդիպելու հնարավորություն լիներ, ես առաջինը կգնայի նրա մոտ ու կնվիրվեի: Հույս ունեմ գնալ նրա մոտ և եթե նրա մոտ լինեի, կլվանայի նրա ոտքերը»:

Աբու Սուֆյանն ասաց. «Ճետո Իրակլոսը հրամայեց կարդալ Մուհամեդի նամակը, որի մեջ գրված էր հետևյալը. « Հանուն Գթասիրտ ու Ողորմող Ալլահի: Ալլահի ստրուկ և առաքյալ Մուհամմադից Հոոմի կառավարիչ Իրակլոսին: Ալլահի խաղաղությունը լինի նրան՝ ով հետևում է ճշմարիտ ճանապարհին: Ես քեզ Իսլամի եմ կոչ անում: Ըսդունիր այն, որ փրկվես կրակից, և Ալլահը երկու անգամ կպարզեատրի քեզ: Իսկ եթե ժխտես, ապա քո վրա կլինի Արիոսի ու նրա կողմնակիցների մեղքը, որոնց մասին ասվում է Ղուրանում.

«Ասա. «Ով Աստվածաշնչի ժողովուրդ (նշանակում է քրիստոնյաներ ու հրեաներ): Եկեք մի արդար խոսքի մեր ու ձեր միջն, որ երկրպագենք միայն Ալլահին, և ուրիշ ոչինչին, և չընդունենք մեկս մյուսիս համար որպես Տեր, քանի որ մեր Տերը միայն Ալլահն է: Իսկ եթե նրանք ժխտեն, ապա ասեք նրանց. «Վկայեք, որ մենք մուտքմաններ ենք» (3:64)

Աբու Սուֆյանն ասաց. «Իրակլոսի խոսքը վերջացնելուց հետո նրա մոտի պալատականների մեջ աղմուկ բարձրացավ: Այնքան ուժեղացավ, որ շհաջողվեց հասկանալ, թե ինչ են ասում: Ճետո մեզ հրամայված էր դուրս գալ: Դուրս գալուց հետո մնացինք մենակ և ես ասացի. «Մուհամեդի գործը հսկայական դարձավ, նույնիսկ Հոոմեացիների թագավորն է վախենում նրանից»: Ճետո նա ավելացրեց. «Երդվում եմ Ալլահով, ես

համոզված էի, որ նրա առաքելությունը կհաղթի և ես ցածրացված էի, մինչև Ալլահը բացեց իմ սիրտը Իսլամին, այնժամ, երբ ես ատում էի» (Ալ-Բուխարի 2782):

Մարգարե Մուհամմեդը (Խ.Ա.Ո.Ն.), Իսլամի կոչելու նպատակով, իր մոտ հրավիրեց Նաջրանի քրիստոնյաներին: Քրիստոնյաները խորհրդակցեցին միմյանց հետ և որոշեցին այնտեղ ուղարկել մի խումբ իրենց գիտնականների, նրանք էին Աբդուլ Մասիհ Ակբիվը, Սահին ու Աբդուլ Զարիսը:

Երբ նրանք հասան Մեղինա, փոխեցին հագուստը, որը հագել էին ճամփորդության ժամանակ, հագան մետաքսյա հագուստ, և ոսկե մատանիներ դրեցին մատերին ու գնացին մարգարեին (Խ.Ա.Ո.Ն.) ողջունելու: Բոլորը ողջունում էին նրան համաձայն սովորույթների, սակայն վերջինս չողջունեց նրանց և մեջքով շրջվեց: Նրանք դուրս եկան մզկիթից և մոտեցան Օսմանին ու Աբդուռահման բին Առուֆին, դժողովով. «Ձեր մարգարեն մեզ հրավիրեց, սակայն երբ մենք գնացինք նրա մոտ, նա չպատասխանեց մեզ: Ի՞նչ խորհուրդ կտաք անել: Վերադառնա՞լ, թե՞ այլ հնարավորության սպասել»: Օսմանն ու Աբդուռահմանը չկարողացան հասկանալ այդ իրադրությունը: Ի վերջո նրանք հարցրեցին Ալիին, որը խորհուրդ տվեց հանել մետաքսյա հագուստն ու ոսկե մատանիները, որ կրում էին և հագնել հոգևորականի հագուստ: Այդ ժամանակ մարգարեն (Խ.Ա.Ո.Ն.) ողջունեց նրանց: Այդ պատճառով քրիստոնյաների պատվիրակները համեստ հագուստ հագան և ողջունեցին մարգարեին (Խ.Ա.Ո.Ն.), որը պատասխանեց նրանց ողջույնին և ասաց. «Երդվում եմ Ալլահով, երբ նրանք առաջին անգամ եկան իմ մոտ, նրանց ուղեկցում էր սատանան»:

Դրանից հետո մարգարեն (Խ.Ա.Ո.Ն.) քարոզեց նրանց և Իսլամ ընդունել առաջարկեց: Նրանք հարցրեցին. «Ի՞նչ եք մտածում Հիսուս Քրիստոսի մասին»: Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն.) ասաց. «Հանգստացեք այսոր և հաջորդ օրը կստանաք ձեր հարցերի պատասխանները»: Մարգարեն հայտնություն էր սպասում այդ մասին, և հաջորդ օրը երրորդ գլխի 59-60 այաքները ուղարկվեցին նրան:

«Ճշմարիտ, Իսան (Հիսուսը) Ալլահի դիմաց նման է Ադամին: Նա ստեղծեց նրան փոշուց, իսկ այնուհետև նրան ասաց. «Եղի՛ք», և նա առաջացավ: Ճշմարտությունը քո Աստծուց է: Այդ պատճառով, մի եղիր կասկածողների շարքերում»: (3:59-60)

Հաջորդ օրը, երբ քրիստոնյաներն եկան մարգարեի (Խ.Ա.Ո.Ն.) մոտ, նա նրանց համար կարդաց իրեն ուղարկված այաթները: Չնայած նրան, որ նրանք լսեցին, որ նրանք հրաժարվեցին ընդունել ձշմարտությունը, 3:61 այաթը մեջբերվեց նույն գլխից:

«Ու սկսի հանդիմանել քեզ եկածի վերաբերյալ դրա գալուց հետո, ասա. «Եկեք կանչենք մեր զավակներին և ձեր զավակներին, մեր կանանց և ձեր կանանց, մեզ ինքներս և ձեզ ինքներդ, իսկ այնուհետև աղոթենք և կոչ անենք Ալլահի անեծքը սուտասանների վրա»»: (3:61)

Դրանով մարգարեն (Խ.Ա.Ո.Ն.) նրանց կոչ արեց դեպի Մուֆահալա՝ սուտասան կողմին անիծել: Քրիստոնյաների պատվիրակությունը խորհրդակցեց միմյանց հետ և հայտարարեց ընդունման մասին: Հաջորդ օրը, վաղ առավոտյան մարգարեն (Խ.Ա.Ո.Ն.) ուղարկեց Սալման ալ Ֆարիսին մի բաց տարածություն, քաղաքից դուրս, պատմական իրադարձության համար: Երբ Նաջրանի քրիստոնյաները տեսան մարգարեին (Խ.Ա.Ո.Ն.), լցվեցին վախով ու հմայվեցին: Աբդուլ Հարիսը նրանց մեծագույն գիտնականը, դիմեց իր մարդկանց հետևյալ խոսքով.

«Ճշմարիտ, ես աստվածային լույս եմ տեսնում մեր հակառակողների երեսներին, եթե նրանք Աստծուն աղոթեին, որ լեռները շարժվեին իրենց տեղերից, ապա դա կլիներ: Զգուշացեք: Մի շարունակեց այդ անեծքը, այլապես կմահանաք և բոլոր քրիստոնյաները կվերանան»:

Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն.) ասաց. «Երդվում եմ Ալլահով: Եթե Նաջրանի քրիստոնյաները սկսեին Մուֆահալը, ապա նրանք վերացված կլինեն»:

Հիսուսի հետևորդների նկարագրությունը

Ալլահը Ղուրանում նրանց նկարագրում է, ասելով.

«Հետո Մենք նրանց հետքերով ուղարկեցինք Մեր առաքյալներին, և ուղարկեցինք Մարիամի որդի Հիսուսին, և նրան պարզեցինք Ինջիլը (Ավետարանը): Նրան հետևողների սրտերում Մենք ցավակցություն և

գթասրտություն լցրեցինք, իսկ վանականներին նրանք ինքներն են հնարել: Մենք նրանց դա չենք հրամայել, սակայն նրանք այդպես են արել, որ որոնեն Ալլահի գոհունակությունը (կամ Մենք հրամայել ենք որոնել Ալլահի գոհունակությունը): Սակայն նրանք հարկին կերպով չհետևեցին դրան: Նրանց շարքերի հավատացողներին Մենք պարզեցինք ենք տվել, սակայն նրանցից շատերը կեղծավորներ են»: (57:27)

Ալլահը Հիսուսի անկեղծ հետևորդներին նկարագրում է, որպես ճշմարտությունը ընդունել շտապողների ու դրան ողջ հոգով հետևողների: Նրանք անում են ամեն ինչ, որ տարածեն Հիսուսի իրական ուղերձը: Ալլահը հրամայեց մուսուլմաններին հետևել նրանց օրինակին և լինել նրանց նման: Ալլահն ասում է.

«Ով հավատացյալնե՛ր, եղեք Ալլահի օգնականները: Մարիամի որդի հիսուսն առաքյալներին ասել է. «Ո՞վ կլինի իմ օգնականը Ալլահի ճանապարհին»: Առաքյալները պատասխանել են. «Մենք Ալլահի օգնականներն ենք»: Խրայելի զավակների մի մասը հավատաց, իսկ մյուսը ոչ: Մենք աջակցեցինք հավատացողներին, նրանց թշնամիների դեմ պայքարում, և նրանք հաղթեցին»: (61:14)

Ալլահը նրանց նկարագրում է նաև որպես մուսուլմանների համար ամենամոտ անձանց: Նա ասել է.

«Դու անմիջապես կգտնես որպես քո ամենասարսափելի թշնամի հավատացյալ հրեաներին ու բազմաստվածներին: Դու նաև անմիջապես կգտնես, որ քեզ ամենամոտ մարդիկ նրանք են, ովքեր ասում են. «Մենք քրիստոնյաներ ենք»: Դա այն պատճառով է, որ նրանց մեջ կան հոգևորականներ և վանականներ, և նրանք գոռողություն չեն ցուցաբերում: Երբ նրանք լսում են առաքյալին ուղարկածը, դու տեսնում ես, թե նրանց իմացած ճշմարտության պատճառով ինչպես են նրանց աշքերը լցվում արտասուրով: Նրանք ասում են. «Աստվա՛ծ մեր, Մենք հավատում ենք: Մեզ դիր հավատացյալների շարքերը»: (5:82-83)

Հիսուսի Համբարձումը Երկինք

Սուսուլմանները հավատում են, որ մարգարե Հիսուսը չէր սպանվել, չէր խաչվել, այլ Աստծո կամքով համբարձվել էր: Ալլահն, Ամենաբարձրյալը ասում է.

«Մենք Սովորեսին պարզեցինք Գրությունը և նրա հետևից այլ առաջալներ ուղարկեցինք: Մենք Մարիամի որդի Հիսուսին պարզ նշաններ պարզեցինք և ամրացրեցինք նրան Սուրբ Հոգով (Չիբրիլով): Մի թե ամեն անզամ, երբ առաջալը ձեզ ասում էր այն, ինչ ձեր հոգով չէր, դուք գոռողություն էիք ցուցաբերում, սուտասան էիք հայտարարում որոշներին և սպանում այլերին»: (2:87)

Ալլահն, Ամենաբարձրյալը նույնպես ասում է.

«Նրանց պատվիրանը խախտելու, Ալլահին չհավատալու, առաջալներին անարդարորեն սպանելու ու ասելու. «Մեր սրտերը լցված են կախվածությունով (կամ լցված են զիտելիքներով): Օ ոչ, դա Ալլահն է, որ կնքել է նրանց սրտերը անհավատության համար, և այդ պատճառով նրանց հավատը չնշին է (կամ նրանցից շատ քշերն են հավատացյալ): Նրանց չհավատալու համար, նրանք մեծ զրաբարտություն արեցին Մարիամին և ասացին. «Ճշմարիտ, մենք սպանեցինք Մարիամի որդի, առաջալ Հիսուսին»: Սակայն նրանք չսպանեցին և չխաչեցին նրան, դա միայն թվացել է նրանց: Ովքեր վիճում են այդ թեմայով մտած են կասկածի մեջ և ոչինչ չզիտեն այդ մասին, այլ ընդամենը հետևում են ենթադրություններին: Նրանք իսկապես չեն սպանել նրան (կամ նրան համոզվածությամբ չեն սպանել): Օ ոչ, այդ Ալլահը նրան համբարձեց Իր մոտ, քանի որ Նա ամենազոր և իմաստուն է: Գրության մարդկանց մեջ չի մնա այնպիսինք, որը չի հավատա նրան (Հիսուսին կամ Սուհամմեդին) մինչ մահանալը (Հիսուսի կամ սեփական մահի), իսկ Վերջին Օքը նրա վկայելու է նրանց դեմ»: (4:155-159)

Իբն Աբբասն ասել է. «Երբ Ալլահը որոշեց, որ Հիսուսը կհամբարձվի, նրա հետևորդները, որոնք տասերկուսն էին, գնացին նրա տուն, և տեսան, որ նրա զիսից ջուր էր թափվում: Հիսուսը նրանց հարցրեց. «Զեզանից ո՞վ կուզեր աստվածանալ, իմ կերպարանքն ունենար և սպանված լիներ իմ տեղը, և դրա համար պարզ ստանար երկնային կացարանը»: Այդ խմբի

ամենաերիտասարդը համաձայնվեց, սակայն Հիսուսը նրան ասաց, որ նստի տեղում, այնուամենայնիվ երիտասարդը կրկնեց և Հիսուսն ընտրեց նրան: Նա սկսեց հայտնվել որպես Հիսուս, իսկ Հիսուսը համբարձվեց: Մարդիկ եկան և բռնեցին այդ երիտասարդին ու սպանեցին նրան խաչի վրա: Ալլահն, Ամենաբարձրյալը ասում է.

«Նրանք (անհավատները) ճարպիկություն արեցին, արեց նաև Ալլահը՝ լավագույն ճարպիկը: Ահա Ալլահն ասաց. «Ով Հիսուս, Ես կհանգստացնեմ քեզ և կհամբարձեմ Իմ մոտ: Ես կմաքրեմ քեզ չհավատացողներից, իսկ քեզ հետևողներին կբարձրացնեմ մինչ Հարության Օրը չհավատացնողներից: Այնուհետև բոլորդ Ինձ կվերադառնաք, և Ես կդատեմ ձեզ ձեր անհամաձայնությունների վերաբերյալ: Չհավատացողներին ծանր տառապանքների կմատնեմ այս աշխարհում և հաջորդ կյանքում, և նրանք օգնականներ չեն ունենա»: Հավատացողներին ու բարեգործներին, նաև առատաձեռնորեն կպարզեատրի: Ճշմարիտ, Ալլահը չի սիրում անօրեններին»: (3:54-57)

Քրիստոնյաները հետագայում պնդում եին, որ Հիսուսը սպանվել է, որ մարի մարդկության մեղքերը: Որպես մուսուլմաններ, համարում ենք, որ մեզանից յուրաքանչյունը կանգնելու է Աստծո դիմաց և դատվելու է իր արարքների համար: Ոչ ոք բոլորի մեղքերի համար պատասխանատվություն չի կրում:

Մարզարե Հիսուսի վերադարձ

Մուսուլմանները հավատում են, որ մարզարե Հիսուսը ժամանակների վերջում կվերադառնա երկիր: Նա կվերադառնա այն ժամանակաշրջանում, երբ անզրագիտությունը լայնորեն տարածված կլինի և մարդիկ հեռացած կլինեն հավատքից: Մարզարե Հիսուսը կլինի արդար կառավարիչ, որը կառավարելու է Իսլամի օրենքներով:

Եղակացություն

Եղել են շատ վեճեր մարգարե Հիսուսի թեմայի վերաբերյալ: Որոշները նրան ատում էին և նրան էին վերագրում վատագույն նկարագրությունները, և կային այլերը, որոնք բարձրացնում էին նրան ու երկրպագում: Աստվածը մուսուլմաններին տարավ հարթ ճանապարհով: Մենք ընդունում ենք այդ մարգարեի մեծությունը: Մենք սիրում և հարգում ենք նրան, սակայն մենք նրան չենք երկրպագում: Նա իսկապես Ալլահի մեծ առաքյալ է, սակայն նա ընդամենը Աստծո ստրուկ է, որն իր մեջ չունի աստվածություն: Դա այնինչն է, որի հաստատումը մենք գտնում ենք Ղուրանում և մարգարեի հաղիսում: Հիսուսն այնպիսինը չի, ինչպես պնդում են քրիստոնյաները՝ Աստծո որդի կամ Երրորդության մաս: Նա ընդամենը Ալլահի առաքյալ է, որն ուղարկվել է իր ազգին, որ նրանց փոխանցի միակ Աստծո հավատքը:

Ալլահը մեզ մտքով և բանականությամբ է օրինել: Մենք պետք է օգտագործենք

մեր իս դա, որ տարբերենք երկրպագելու արժանիներին և ոչ արժանիներին:

Մենք ձգում ենք մեր ձեռքերը Գրության մարդկանց և խնդրում ենք կարդալ մեր իսկ գրքերը, հարցեր տալ և փնտրել Ճշմարիտ գիտելիքներ: Ալլահն, Ամենաբարձրյալը ասում է.

«Այն բանից հետո, երբ նրանց համար պարզեցվեց Ճշմարտությունը, Գրության մարդկանցից շատերը իրենց նախանձից կուզեին հեռացնել ձեզ հավատքից, երբ դուք արդեն ընդունել էիք: Ներեք նրանց և մեծահոգի եղեք, մինչ Ալլահը հայտնվի Իր հրամանով: Ճշմարիտ, Ալլահն ամենակարող է»: (2:109)

Հրեաներին ու քրիստոնյաներին տրված էր զալիք մարգարեի ավետը: Նրանք կարծում էին, թե նա կլինի Խորայելի զավակներից մեկը, սակայն երբ նա եկավ այլերից, նրանք չհավատացին նրան: Ալլահն ասում է.

«Նրանց մոտ Ալլահից Գրություն եկավ, որը հաստատում էր իրենց մոտի եղածի Ճշմարիտ լինելը: Նախկինում նրանք աղոթում էին անհավատների դեմ պայքարում հաղթանակի համար: Երբ նրանց մոտ

հայտնվեց այն, ինչը նրանք իմացան, ապա նրանք հրաժարվեցին հավատալ դրան: Թող Ալլահի անեծքը զա անհավատների վրա»: (2:89)

Ես հուսում եմ, որ այս գիրքը ձեր համար որպես հայտնություն կծառայի և կդառնա ճշմարտության որոնման ձեր ճանապարհորդության սկիզբը: Գեղեցկություն է այն ճշմարտությունը, որը գտնելու պահից դուք մնում եք նրա հետ ու գտնում եք նրանում խաղաղություն և հանգստություն: Ալլահն, Ամենաբարձրյալը ասում է.

«Նրանք հավատում են, և նրանց սրտերը միսիթարվում եք Ալլահին հիշատակելով: Մի ՞թե Ալլահին հիշատակելով սրտերը չեն միսիթարվում»(13:28)

اللَّهُ رَبُّ الْعَالَمِينَ
وَالْمَلَائِكَةُ مُنْزَلُونَ
إِلَيْهِ شُفَّاعٌ مُّنْصَدِّقُونَ
أَجَدِلُهُمْ بِأَجَادِلِهِنَّ

Փառք Ալլահին՝ աշխարհների Աստծուն:

Ես խնդրում եմ Նրանից

Շնորհակալություն հայտնել և պահպանել

Ամեն չարիքից մեր մարզարե Մուհամմեդին,

Նրա ընտանիքին, հետևորդներին և բոլոր նրանց,

Ովքեր ճշմարտության ճանապարհին հետևեցին

Նրան:

www.thekeytoislam.com

www.islamland.com

www.islamhouse.com

www.sultan.org

www.islamic-invitation.com